

## ՆԱԽԱՐԱՐ ՄԸՔՏԱՏ. «ՍՈՒՐԻԱ ԿՈՉ ԿՈՒՂԸ ԿԱՌՈՒՅԵԼՈՒ ԲԱԶՄԱԲԵԷՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳ, ՈՒՐ ԲՈՒՐԸ ԿԸ ԳՈՐԾԵՆ ՄԱԿ-ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀՈՎԱՆԻՆ ՆԵՐՔԵՒ»

Նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ, որ Սուրիան կը ներկայացնէ ՄԱԿ-ի 77-րդ Ընդհանուր Ժողովին, Երկուշաբթի, 26 Սեպտեմբեր 2022-ին, ՄԱԿ-ի կեդրոնատեղիին մէջ Սուրիոյ Հանրապետութեան խօսքը արտասանելով շեշտեց նոր, բազմաբեւեռ աշխարհակարգի կառուցման անհրաժեշտութիւնը, ուր բոլորը կը գործեն ՄԱԿ-ի կանոնադրութեան սկզբունքներուն եւ նպատակներուն հովանիին ներքեւ, նշելով, որ Սուրիան այս կոչը կ'ուղղէ մեկնելով այն դաժան պատերազմէն, որ իր լայն շրջագիծին մէջ հետեւանք էր Արեւմուտքին աշխարհին տիրելու նկրտումներուն: Ան նկատել տուաւ, որ թէեւ պատերազմը չկըրցաւ հասնիլ իր նպատակներուն, այդ կարգին՝ կոտորել Սուրիոյ ժողովուրդին կամքը եւ մեկուսացնել երկիրը, սակայն ան դառն հետք թողուց սուրիացի ժողովուրդին վրայ:




Նախարար Մըքտատ իր խօսքին մէջ հետեւեալ հաստատումները կատարեց. -Սուրիոյ ժողովուրդը աւելի քան 11 տարիէ ի վեր կը տառապի կարգ մը պետութիւններու հովանաւորած վայրագ ահաբեկչութենէն:

- Սուրիա նեցուկ կը կանգնի Պաղեստինի եղբայր ժողովուրդին՝ հողերու ազատագրութեան իր պայքարին մէջ:
- Իսրայէլ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն զօրակցելով իր սեւ պատմութեան մէջ էջ մը եւս կ'արձանագրէ:
- Կոլանի ազատագրման մեր իրաւունքը կայուն է եւ զիջումի ենթակայ չէ:
- Սուրիա 2011-էն ի վեր բանակցութեան եւ փոխհամաձայնութեան միջոցներուն կը դիմէ:
- Սուրիա, նախքան իր դէմ մղուած ահաբեկչական պատերազմին բռնկումը, ինքնաբաւ երկիր էր:
- Սուրիա զօրակցութիւն կը յայտնէ Ռուսիոյ ինքնապաշտպանութեան եւ ազգային անվտանգութեան պահպանման իրաւունքին:
- Սուրիա կը դատապարտէ Զուլայի նկատմամբ սահմանուած տնտեսական պաշարումը:

## ՄԸՔՏԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՅՑ ԵՐԿԿՈՂԱՅ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ՄԱԿ-ի 77-րդ նստաշրջանի Ընդհանուր Ժողովի շրջագիծէն ներս, Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆայսալ ալ-Մըքտատ Նիւ Եորքի մէջ հանդիպում ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանի հետ:



Կողմերը ներկայացուցին իրենց երկիրներուն վերջին զարգացումները, լուսարձակի տակ առնելով հայ եւ սուրիացի ժողովուրդներուն բարեկամական, պատմական յարաբերութիւնները: Նախարարները շեշտեցին երկկողմ յարաբերութիւնները երկու երկիրներու շահերուն ծառայող նոր մակարդակի բարձրացնելու անհրաժեշտութիւնը: Նախարար Մըքտատ շնորհակալութիւն յայտնեց նախարար Միրզոյեանին Սուրիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան Մարդասիրական խումբին տարած աւանգատներուն եւ բժշկական աշխատանքներուն համար:

## ՀՅՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

2020 թուականի Սեպտեմբերի 27-ին՝ Թուրքիայի բացայայտ ռազմական աջակցութեամբ, վարձկանների եւ ահաբեկիչների ներգրամամբ, Արցախ-ատրապէյճանական շփման գծի ողջ երկայնքով, Ատրապէյճան անցաւ յարձակման:

44 օր ձգուած Ատրապէյճանի ռազմական նախայարձակման հետեւանքով տեղահանուեց եւ ունեզրկուեց շուրջ 70 հազար հայ, աւերուեցին մօտ 17 հազար քաղաքացիական շինութիւններ եւ ենթակառուցուածքներ, սպանուեցին հարիւրաւոր քաղաքացիական անձինք: Ատրապէյճանի կողմից բռնագրաւուած Արցախի Հանրապետութեան տարածքներում մնացին հայկական պատմամշակութային ժառանգութեան 1456 նմուշներ, որոնց նկատմամբ Ատրապէյճանը որդեգրել է ոչնչացման կամ իւրացման քաղաքականութիւն: Տարածքային կորուստների կողքին անդառնալի են հինգ հազարի հասնող մարդկային կորուստները: Մինչ օրս անյայտ է մի քանի տասնեակ հայ գերիների ճակատագիրը:



Ռազմական յանցագործութիւններով, արգելուած գէնքի կիրառմամբ ուղեկցուող թուրք-ատրապէյճանական նախայարձակման 44 օրերին, ցաւալիօրէն, անտարբեր մնաց միջազգային հանրութիւնը:

2020-ի Նոյեմբերի 9-ի եռակողմ յանձնադրական յայտարարութեամբ Ատրապէյճանի վերահսկողութեան տակ անցաւ Արցախի Հանրապետութեան տարածքի շուրջ 72%-ը, այդ թուում Շուշի քաղաքն ու Հաղթոյի շրջանը: Ստեղծուած իրավիճակում արցախահայութեան ֆիզիքական անվտանգութեան միակ երաշխաւորը ռուսական խաղաղապահ ուժերն են:

44-օրեայ պատերազմն հնարաւոր դարձաւ իշխող վարչախմբի անկարողութեան, ներքին եւ արտաքին մարտահրաւերները դիմակայելու սնանկութեան, օտար օրակարգէր սպասարկելու հայրենադաւ յանձնառութեան:

ՀՅՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ  
 Շար.՝ էջ 2

## ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԵՐ ԽՍԵՉԵՐԹ՝ Ի ՅԻՇՏԱԿ ԱՌՅԱՆԵԱՆ Բ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՄ

«Ապառաժ» կը յայտնէ, որ 27 Սեպտեմբերին արցախեան 44-օրեայ պատերազմի 2-րդ տարեկիցին առիթով Ստեփանակերտի մէջ հազարաւոր քաղաքացիներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ Խաչերթ՝ ի յիշատակ արցախեան Բ. պատերազմին նահատակուած հերոսներուն:



Խաչերթը ընթացք առաւ Ստեփանակերտի Ս. Յակոբ եկեղեցւոյ բակէն, ուր իր խօսքը արտասանեց Հայ Առաքելական եկեղեցւոյ Արցախի Թեմի Փոխառաջնորդ Սահակ Վրդ. Շաքարեան:

Կէսօրէ առաջ ժամը 11:00-ին մասնակիցները մէկ վայրկեան լռութեամբ յարգեցին զոհուածներուն յիշատակը, այնուհետեւ «Տղերքը ո՛րջ են», «Միութիւն, Պայքար, Յաղթանակ» եւ այլ կոչերով շարունակեցին երթը դէպի Ստեփանակերտի Եղբայրական յուշահամալիր:

Երթին կը մասնակցէին նաեւ Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան, Արցախի նախկին նախագահ Բակօ Սահակեան, Արցախի պետական նախարար Արտակ Բեգլարեան, Արցախի Ազգային ժողովի պատգամաւորները, Արցախի կառավարութեան անդամներն ու հոգեւոր այրերը:

Մասնակիցները պարգեցին 44-օրեայ պատերազմին նահատակուած հերոսներուն լուսանկարները: Երթի աւարտին Ստեփանակերտի Եղբայրական յուշահամալիրին մէջ Արցախի թեմի փոխառաջնորդ Սահակ Վրդ. Շաքարեանի ձեռամբ տեղի ունեցաւ արցախեան 44-օրեայ պատերազմին նուիրուած «Լուսոյ խորան»-ի օրհնութեան կարգն ու 44-օրեայ պատերազմին նահատակուած հերոսներուն հոգեհանգստեան արարողութիւն:

Խմբագրական

ՎԵՐԱՄՈՒՏԸ ՆՈՐ ՄԿԻԶԲ

Սուրիահայ վարժարանները 2022-2023 ուսումնական տարեշրջանի վերամուտը կը դիմադրեն որոշ դժուարություններ յաղթահարած, սակայն այլ մարտահրավերներու դեմ կանգնած:

Վերջին տարիներուն, հակառակ երկրի տնտեսական եւ կենցաղային ծանր պայմաններուն, հայկական վարժարաններէն շրջանաւարտ դառնալով Սուրիոյ համալսարաններու տարբեր ճիւղեր արձանագրուեցան խոստմնալից ուսանողներ: Այսօր հպարտութեամբ կարելի է ըսել, որ շրջանցելով բոլոր դժուարութիւնները, ապրելով բազմատեսակ գրկանք, հայ ուսանողներ բժշկական, երկրաչափական, գիտական, գրական եւ արուեստի տարբեր ճիւղերու մէջ հպարտութիւն առթող արդիւնք կ'արձանագրեն: Վերջին տասը տարիներուն Սուրիոյ լաւագոյն համալսարաններ յաճախող հայ աշակերտներուն որակը նկատառելի բարելաւում արձանագրած է: Եթէ տասը տարի առաջ հայ շրջանաւարտներուն 60 առ հարիւրը կը յաճախէր բարձրագոյն համալսարաններ, այսօր կարելի է ըսել, որ այդ տոկոսը բարձրացած է 80 առ հարիւրի:

Միւս կողմէ, սակայն, երկրի ապահովական ցարդ բխրուն վիճակը նկատի ունենալով, շատ մը երիտասարդներ շրջանաւարտ ըլլալով երկրորդական վարժարաններէ կը գաղթեն՝ իրենց ապագան կառուցելու առաւելաբար Զայաստանի մէջ: Այս մէկը դրական երեւոյթ կը համարենք, սակայն երիտասարդութեան թիւի նուազումը սուրիահայ համայնքին մէջ այլ դժուարութիւններ կը յարուցանէ՝ յատկապէս մարդուժի եւ աշխատուժի թիւի նուազումին ահագնազը հնչեցնելով:

Այլ հարց է նաեւ այն, որ տնտեսական ծանր պայմանները մասամբ մեր երիտասարդները կը մղեն աշխատելու ոչ թէ ազգային, այլ մասնաւոր հատուածի հաստատութիւններու մէջ, ինչ որ յատկապէս վարժարաններէն ներս ուսուցիչներու եւ վարչական պատասխանատուներու երիտասարդականացման ընթացքը կը դանդաղեցնէ:

Մեր վարժարանները հայեցի դաստիարակութեան առաքելութիւնը պահպանելու համար կը ջանան հայ ուսուցիչներ ներգրաւել տարբեր առարկաներու դասաւանդումին համար, սակայն ամսականներու ոչ-խորախուսիչ պատկերը այդ հեռանկարը իրականանալի չի դարձնէր երբեմն:

Տնտեսական դժուարութիւնները յաղթահարելի կրնան ըլլալ, սակայն, եթէ ուսումնակրթական մարմիններ եկամտաբեր աղբիւրներու որոնման ծրագիր մշակեն: Այս պարագային քանի մը տարիէն կարելի կը դառնայ գոհացնել ոչ միայն հայերէնաւանդ, այլեւ տարբեր առարկաներ դասաւանդող ուսուցիչ-ուսուցչուհիներու նիւթական գէթ նուագագոյն ակնկալութիւնները:

Միւս մարտահրավերը ուսումնակրթական մեր միջոցներուն արդիականացումն է: Արդիականացման այս ծրագիրը հարկ է որ քայլ պահէ ուսումնական պետական ծրագրի կիրարկման պահանջներուն հետ, որուն համար ուսուցիչներ վերապատրաստման յատուկ դասընթացքներու կրնան հետեւիլ՝ ունենալով համապատասխան միջոցներ:

Ծնողներու տնտեսական վիճակը եւս կը սահմանափակէ մէկէ աւելի դպրոցական ունեցողներու կրթաթոշակներու վճարման կարելիութիւնը: Ուստի վարժարանները այս դժուարութիւնը եւս յաղթահարելու եւ ծնողներու հետ խորհրդակցաբար լուծումներ որոնելու պատասխանատուութիւնը կը կրեն:

Այս դժուարութիւնները յուսահատութեան թող չմատնեն, սակայն, մեր վարժարաններն ու ծնողները, այնքան ատեն որ մտերոպաշունչ մեր վարժարաններ կը յաճախեն ժրջան հայ աշակերտներ, որոնք մեծ սիրով կը փութան հայկական վարժարան թէ՛ այնտեղ տիրող հայաբոյր մթնոլորտը վայելելու, եւ թէ՛ առողջ մրցակցութեամբ իրենց դասընկերներուն հետ բոլորելու ուսումնակրթական տարին:

Յետպատերազմեան շրջանին, կրթական մարմիններ նուիրուեցան սուրիահայ վարժարաններու վերանորոգման աշխատանքին: Այսօր մեր դպրոցները օժտուած են գեղեցիկ ու յարմարաւետ կառոյցներով, մասնազոտական բաժիններով:

Եթէ ունենանք ծրագիր, նախաձեռնութեան բարձր ոգի, կը հաւատանք, որ յառաջիկայ տարիներուն կը յաջողիք քայլ առ քայլ բաւարարել մեր վարժարաններուն տնտեսական եւ ուսումնակրթական տարաբնոյթ կարիքները եւս:

Սուրիահայ մեր վարժարանները համայնքի գոյութեան հիմնական խարխիւսներն են, հետեւաբար արժանի են գուրգուրանքի:

Կը մաղթենք, որ վերամուտը ըլլայ նոր եւ յուսալի սկիզբ:

Բարի՛ վերամուտ:

«Գ.»

«Ուաթան Անլայն» հաղորդեց, որ լիբանանեան պատուիրակութիւն մը, Թրիփոլիի եւ Լիբանանի հիւսիսային շրջաններու ընտանիքներու ներկայացուցիչ Անուան Օմարիի նախագահութեամբ, Չորեքշաբթի, 28 Սեպտեմբեր 2022-ին Թարթուսի նահանգապետարան այցելեց:



Պատուիրակութիւնը հանդիպում ունեցաւ Թարթուսի նահանգապետ Ապտուլ Զալիմ Աուատ Խալիլի հետ եւ շնորհակալութիւն յայտնեց սուրիական կառավարութեան, որ ճիգ չխնայեց լիբանանեան ընկղմած նաւուն գոհերը փրկելու եւ նոյնիսկ խեղդամահ պարագաներուն դիակները որոնելու, գործակցաբար Թարթուսի առողջապահական խմբակներուն, բնակիչներուն եւ նահանգապետարանին:

Յիշեցը որ 23 Սեպտեմբերին, ՍԱՆԱ հաղորդեց, որ նախանցեալ Երեքշաբթի, լիբանանեան հիւսիսային Թրիփոլի քաղաքին յարակից Մընիէ շրջանէն ընթացք առաւ լիբանանեան եւ այլ հպատակատուութիւն ունեցող գաղթականներ ընդգրկող ապօրինի նաւ մը՝ ուղղուելով Կիպրոս:

Նախքան Կիպրոս հասնիլը, նաւը ընկղմեցաւ սուրիական Թարթուսի ծովային սահմաններուն մէջ: 77 ուղեւորներ խեղդամահ եղան:

- Տուպայի մէջ ընթացք առաւ «Կանաչ Տնտեսութիւն» խորագիրով համաշխարհային գագաթնաժողովի 8-րդ շրջանը՝ Սուրիոյ մասնակցութեամբ:



Սուրիան ներկայացուց Սուրիոյ տեղական ինքնակառավարման եւ կենսոլորտի պահպանման նախարար Զուսէյն Մախլուֆ, ներկայութեամբ կառավարական հաստատութիւններու եւ համաշխարհային ընկերութիւններու ներկայացուցիչներու եւ մասնագետներու:

-Սուրիոյ 2բօսաշրջութեան նախարարութեան հաստատման 50-ամեակին եւ գբօսաշրջութեան միջազգային տօնին առիթով, Զինգշաբթի, 22 Սեպտեմբերին, Զալէպի պատմական բերդին մէջ բացուող կատարուեցաւ մշակութային ձեռնարկներու շաբթուան:



Արդարեւ, Սուրիական պետական սիմֆօնիք նուագախումբը դասական երաժշտութեան ընտիր փունջ մը ներկայացուց, իմբավարութեամբ նուագախումբի գեղարուեստական ղեկավար մայսթրօ Միսաք Պաղպուտարեանի:

Ելոյթը կազմակերպուած էր Սուրիոյ 2բօսաշրջութեան նախարարութեան կողմէ, գործակցաբար Մշակոյթի նախարարութեան եւ Զալէպի նահանգապետարանին:

Զամերգի երկրորդ բաժինին նուագախումբին միացան Զամազգայինի «Չուարթօն» ու ԶԵԸ-ի «Սպենդիարեան» հայկական երգչախումբերը:

Նախքան համերգը ցուցադրուեցաւ Սուրիոյ 2բօսաշրջութեան նախարարութեան կազմութեան պատմութիւնը ներկայացնող տեսանիւթ մը:

Զամերգին տուտուկով հանդէս եկաւ մենակատար Մուհամմետ Ազաուին, որ ներկայացուց Խաչատուր Աւետիսեանի «Ծաղկած Բալէնի»-ն, մասնակցութեամբ «Անդրանիկ» պարախումբի մենակատարներու:

Պաղպուտարեան յաջողեցաւ ներկաներուն հրամցելու դասական միջազգային, հայկական եւ սուրիական, յատկապէս հալէպեան երաժշտական ստեղծագործութիւններու գեղեցիկ փունջ մը:

ՅՅԳ ՆԱՅԱՍՏԱՆԻ...

Սկիզբ՝ Էջ 1

Եան արդիւնքում: Պատերազմից երկու տարի անց հայկական երկու պետականութիւնները կանգնած են ճակատագրական մարտահրավերների, պատերազմի իրական սպառնալիքի առջեւ: Աշխարհաքաղաքական նոր իրողութիւնների, խախտուած ուժային հաւասարակշռութեան եւ խոցուած ինքնիշխանութեան պայմաններում գործող քաղաքական վարչակարգը անկարող է դիմակայել հայոց պետականութեանն ու հայ ժողովրդին ուղղուած գոյութենական սպառնալիքները, նոր յանձնուողականութեան հեռանկարը:

Այսօր, աւելի քան երբեւէ, հայ ժողովրդի լինելիութեան հրամայականը, Զայաստանի Զանրապետութեան անվտանգային շահերը, մեր պետականութեան ապագան պահանջում են ազգային միասնականութիւն եւ համախմբում:

Խոնարհում ենք մեր հազարաւոր գոհերի յիշատակի առջեւ եւ վերահաստատում ազգային պետականութիւն կառուցելու, ազգային շահերին ծառայելու ԶՅԳ յանձնառութիւնը:

Լուրեր Հայաշխարհին

ՆԻՔՈՍ ՏԵՆԻՏԻԱՍ. «ՅՈՒՆԱՍՏԱՆ ԿԸ ԴԱՏԱԴԱՐՏԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ ԱՏՐԴԷՅՃԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՎ Կ'ԱԶԱԿՅԻ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ»

27 Սեպտեմբերին, Երեւանի մէջ Հայաստանի Արտաքին գործոց նախարարութեան (ԱԳՆ) հետ հանդիպումներ ետք, Յունաստանի արտաքին գործոց նախարար Նիքոս Տենտիաս յայտնեց, որ Յունաստան կը դատապարտէ Հայաստանի դեմ Ատրպէյճանի գործողութիւնները եւ կ'աջակցի ՀՀ տարածքային ամբողջականութեան:

«Յունաստան կ'աջակցի բոլոր պետութիւններու տարածքային ամբողջականութեան: Անշուշտ, այս կը վերագրուի նաեւ մեր լաւ գործընկերոջ՝ Հայաստանին: Մենք կը հաւատանք սահմաններու անքակտելիութեան: Զանկի մը օր առաջ Հայաստանի տարածքը կը զբաղակրթուէր Ատրպէյճանի զինուորական ուժերուն կողմէն: Այս առումով պիտի փափաքէի մէջբերել Ֆրանսայի նախագահ Մաքրոնի խօսքը, որ ըսաւ. «Կը դատապարտենք ինչ որ տեղի ունեցած է ի հակադրութիւն խաղաղ բանակցութիւններուն»:

Նիքոս Տենտիաս նաեւ ներկայացուց Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին գծով Յունաստանի դիրքորոշումը. «Մենք կ'աջակցինք միջազգային իրաւունքով խաղաղ, փոխադարձ ընդունելի լուծումներուն, սակայն լուծումները եւ խաղաղութիւնը չեն կրնար կառուցուիլ այնպիսի պայմաններու մէջ, երբ կայ ուժի կիրառման սպառնալիք», ըսաւ ան, աւելցնելով որ Թուրքիա այս պահուն կը սպառնայ պատերազմ սկսիլ Յունաստանի դեմ:

«Թուրքիա կը փորձէ օգտուիլ այս խառն իրավիճակէն: Յստակ ուղերձ կ'ուզեմ յղել այն երկիրներուն, որոնք կը փորձեն վերագծել քարտէզները՝ վերանայման քաղաքականութիւնները պիտի ձախողին: Մենք կը փափաքինք կառուցողական երկխօսութիւն սկսիլ Թուրքիոյ հետ, բայց նաեւ պատրաստ ենք պաշտպանելու մեր երկիրը եւ մեր իրաւունքները», եզրափակեց Տենտիաս:

Յունաստանի արտաքին գործոց նախարարը հանդիպումներ ունեցաւ նաեւ Հայաստանի վարչապետին եւ պաշտպանութեան նախարար Սուրեն Պապիկեանի հետ:

ՈՐՈՇԵՐԸ ԲՈՉԱՐԵԱՆ. «ԵՍ ԳԵՄ ՀԱԿՏԱՐ, ՈՐ ՈՐԵԷ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԹՇՆԱՄԻՆ ՄԵՐ ՏԱՐԱԾՔԷՆ ԴՈՒՍ ԿՈՒ ՊԱՅ»

Ես չեմ հաւատար, որ որեւէ յայտարարութեամբ, որեւէ մէկը մեր տարածքէն դուրս կու գայ: Առաջին դարաբաղեան պատերազմին ընթացքին, երբ նախաձեռնութիւնը մեր ձեռքն էր, եւ այն ատեն ՄԱԿ-ը շատ աւելի ազդեցիկ կառոյց էր, այդ հնչած յայտարարութիւնները մեզ չկանգնեցուցին: Մինչեւ ուղղակի գործողութիւններ տեղի չունենան, Ատրպէյճան պիտի չկանգնի: Այս մասին 28 Սեպտեմբերին մամուլի ասուլիսի ատեն ըսաւ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Բոչարեան:



«Ինչու այս անգամ մենք չունենանք կամաւորներու մեծ բանակ, պարզ պատճառով... ամենէն աշխույժ պատերազմի մասնակից Աշոտ Մինասեան պատերազմէն ետք բանտարկուեցաւ: Դաշնակցութեան ջրկատներով, վաշտերով մասնակցած երիտասարդներուն կէսին նկատմամբ քրեական գործ յարուցուած է, մարդիկ կան, որոնք մինչեւ օրս կայանքի տակ են: Այս անգամ զինուորը կռուեցաւ, բայց զինուորին միակ թողուցին: Երբ կոյրը կը սկսի տեսնել, նախ մէկ կողմ կը նետէ իրեն օգնած փայտը: Պատերազմի ընթացքին այն մարդիկ, որոնք պէտք էր որ հերոսի կոչում ստանային, յայտնուած են բանտերու մէջ: Այն մարդիկ, զորս պէտք էր պաշտօնէն զրկել, հերոսի կոչումներ կը ստանային», ըսաւ ան:

ՍԱՊԱԹԷԼԵԱՆ. «ԼԵՒՈՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԱՌԱՔԵՆՈՒԹԻՒՆԸ ՓԱՇԻՆԵԱՆԸ ԱՐԴԱՐԱՅՆԵՆ ԷՐ»

Լեւոն Տեր Պետրոսեանի առաքելութիւնը ընդամենը Նիկոլ Փաշինեանը արդարացնելն էր, ամենավտանգաւոր թէզն ալ, որ կ'ըսէր, թէ «Ով որ իշխանութեան դեկին ըլլայ, նոյնը պիտի ըլլայ, կամ՝ աւելի վատ», այս խօսքով ան հասարակութեան նոր պարտութեան ու անձնատուութեան կը պատրաստէր: Յաւրջ եւ դժբախտաբար՝ այս մարդը չփոխուեցաւ ու կը շարունակէ իր վտանգաւոր թէզը: «Փաստինֆօ»-ի հետ զրոյցին ըսաւ ՀՀ Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթէլեան՝ անդրադառնալով Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր Պետրոսեանի յայտարարութիւններուն:



«Առաջին նախագահը, մասնաւորապէս, Պատկերասփիւռի Հանրային ընկերութեան տուած հարցազրոյցին ընթացքին յայտարարած, որ Հայաստանի կը սպասուին ծանր եւ ցաւոտ լուծումներ եւ որ պէտք է ընտրել նուազագոյն ցաւալի լուծումը, իսկ վատագոյն լուծումներէն խուսափելու համար ալ պէտք է պայմանագրեր կնքել եւ Ատրպէյճանի, եւ Թուրքիոյ հետ»:

Անդրադառնալով Լեւոն Տեր Պետրոսեանի այս դիտարկումներուն, Իշխան Սաղաթէլեան յիշեցուց՝ անկախ այս նոյն այլընտրանք չըլլալու, յանձնուելու, տարածքներ յանձնելու ուղերձը կրկնած էր եւ 1992-ին, եւ 1997-ին:

«Այդ ժամանակ ալ կ'ըսէր այլ տարբերակ չկայ, պէտք է յանձնենք, բայց իր հեռանալէն ետք պարզուեցաւ, որ այլ տարբերակ կայ, Հայաստանի մէջ ձեւաւորուեցաւ իշխանութիւն, որուն օրօք, ըստ էութեան, 20 տարի պատերազմ տեղի չունեցաւ, կարելի եղաւ երկիրը զարգացնել եւ կառուցել»:

Սա Տեր Պետրոսեանի առաջ տարած մշտական գիծը եղած է, ըսաւ Սաղաթէլեան եւ աւելցուց. «Երկիրը այս վիճակին մէջ յայտնուեցաւ 2018-էն ետք, երբ իշխանութեան եկան իր գաղափարակիցները, տարածքներ յանձնելու կողմնակիցները»:

Լեւոն Տեր Պետրոսեան նաեւ առաջարկած էր ընդդիմութեան մէկ կողմ դնել տարակարծութիւնները եւ համախմբուիլ իշխանութեան շուրջ՝ «երկրին առջեւ ծառայած լրջագոյն հարցերը լուծելու համար պահանջուող ցաւոտ որոշումները նկատի առնելով»:

Ինչ կը վերաբերի առաջին նախագահին այս առաջարկին՝ Սաղաթէլեան ՀՀ-ի անունով յայտարարեց, որ կուսակցութիւնը երբեք տրամադիր չէ համախմբուիլ Փաշինեանի շուրջ ու ամեն ինչ պիտի ընէ՝ զինք հեռացնելու համար:

ՄԱՔՐՈՆ. «ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ Գ'ԱՐԴԱՐԱՅՆԵՐ ԱՅԼ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ»

«Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ երկխօսութիւնը պէտք է վերականգնի», յայտարարեց Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն՝ 27 Սեպտեմբերին Փարիզի մէջ ընդունելով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը, աւելցնելով, որ յառաջիկայ ժամերուն կը պատրաստուի հեռաձայնային հաղորդակցութիւն ունենալ նաեւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:



«Ֆրանսան պիտի ընէ կարելին, որպէսզի Հարաւային Կովկասը ըլլայ կայուն, յուսալի եւ բարգաւաճ շրջան», յայտնեց Ֆրանսայի նախագահը: Մաքրոնի համաձայն, Ատրպէյճանի նախագահը եւս «մտադրութիւն յայտնած է վերջ դնելու անկայունութեան եւ աջակցելու որոշումներու գոյացման»:

Էմանուէլ Մաքրոն դիտել տուաւ, որ 14 Սեպտեմբերէն Ֆրանսան Ատրպէյճանէն կը պահանջէ դուրս բերել զօրքերը Հայաստանի տարածքէն: «Սահմանագայտման եւ սահմանագծման բացակայութիւնը չ'արդարացնէր այլ պետութեան տարածք ներխուժումը», ընդգծեց Մաքրոն:

«ԴՐՕՇԱԿ»-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՆԱԽԱՆՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՎԵՐԱԶԱՐԹՕՆՔՆ ՈՒ ԱՐՑԱԽԵԱՆ ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄԸ

Հայաստանի՝ որպես պետության գոյատևման համար բախտորոշ նշանակություն ունեցող իշխանափոխության գործընթացը, թույլ է, թե՛ յայտնուել է փակուղու առաջ: Ընդդիմադիր շարժումն առաջնորդող ուժերը շարունակում են կրկնել, որ պատրաստուում են իշխանափոխությունն իրականացնելու օրինական պայքարի ճանապարհով, իսկ իշխանության պահպանմամբ արդարադատությունից խուսափող ղեկավարությունը փաստում է, որ չի խորշելու անօրինական ու բռնի միջոցներով ճնշել իրեն գահ-



ընկեց անելու փորձերը: Իրավիճակի հանգուցալուծման հարցում գլխավոր շահառուն՝ ժողովուրդը, ի դեմս իր մեծամասնության, լուռ է կրաւորական պահուածքով հետեւում է իրադարձութիւններին այնպէս, կարծես երկրում է նրա շուրջը տեղի ունեցողն իր հետ առնչութիւն չունի:

Միայն կը լինի մտածելը, թէ ժողովրդի նոյն մեծամասնութիւնը չի գիտակցում իր գլխին կախուած լրջագոյն սպառնալիքների գոյութիւնը, չի զգում ընկերա-տնտեսական ծանրացող իրավիճակը, անտարբեր է երկրի դիմագրաւած ծանրացոյն մարտահրաւերների նկատմամբ եւ չի փափաքում արմատական փոփոխութիւնների, երկրի կորացած մեջքը շտկելու մասին: Ենթակայական ու մասնաւոր հարցերը կարելորդելով համարժէք չափով՝ պետք է արձանագրենք, որ ժողովրդի կրաւորականութեան հիմնական պատճառներն են խոր հիասթափութիւնը հերթական իշխանութիւններից եւ անորոշութիւնն ապագայի հարցում: Շօշափելիօրէն չպատկերացնելով, թէ ինչ է սպասոււմ երկրին հերթական իշխանափոխութիւնից յետոյ, պարզ մարդը յանգում է մակերեսային եզրակացութեան, թէ ընթանում է պայքար իշխանութեան համար, որի առաւելութիւնները տեսանելի չեն, եւ միաժամանակ մեծ է հաւանականութիւնը, որ վատ կացութիւնը կարող է փոխարինուել վատթարագոյնով, երկրի դիմագրաւած մարտահրաւերներին կարող են աւելանալ տրերը: 2021 թ. խորհրդարանական ընտրութիւնները փաստեցին, որ կրած պարտութեան եւ շարունակուող նահանջի տեսանելի իրողութիւնը ժողովուրդը գերադասեց ընդդիմութեան առաջարկած լաւ ապագայի անորոշ հեռանկարից: Ի հարկէ, որպէսզի ընդդիմութեան խոստացած ապագան հնարաւորինս սպառնալից ու մռայլ տեսք ունենայ, գործող իշխանութիւնն իր ընդհանուր քարոզչութեամբ, ինչպէս եւ օտարահպատակ իշխանութեան պահպանմամբ շահագրգիռ արտաքին ուժերը քիչ ներդրում չեն ունեցել:

Հայրենիքի ողբերգական կորուստների ազդեցութեան ու համապարփակ ճգնաժամի լաբիրինթոսում յայտնուած ժողովուրդը ենթագիտակցօրէն հասկանում է, որ Հայաստանն ու Արցախը կարող են գոյատևել միայն համընդհանուր վերափոխութեան պարագայում: Կեանքի հասցրած շքմեցնող հարուածներից յետոյ ողջ մերկութեամբ ակնառու դարձաւ այն իրողութիւնը, որ ներկայի ու ապագայի հանդէպ անպատասխանատու, անփոյթ ապրուած տարիներից յետոյ յայտնուել ենք ազգային կեանքի համընդհանուր անկման ու ճգնաժամի առաջ: Ցանկացած բնագաւառ՝ սկսած կրթութիւնից ու գիտութիւնից մինչեւ տնտեսութիւն, քաղաքականութիւն եւ մանաւանդ ազգային արժէքներ ու իտելլներ, քայքայուած է, հասցուած պարզունակ մակարդակի, խեղուած ու արհամարհուած: Ի վերջոյ այսօրուայ իշխանութիւնն էլ երկնքից չընկաւ, այլ հարազատ պտուղն է մեր անկումների՝ ազգային եւ բարոյական նահանջների:

Ակնյայտ է, որ կա՛մ Հայաստանն ու հայութիւնը վերջնականապէս խորտակուելու են՝ կորցնելով պետականութեան հեռանկարը եւ վերածուելով ժամանակի մէջ անհետացող համայնքի, կա՛մ բոլոր բնագաւառների արմատական բարեփոխմամբ հնարաւոր կը լինի ձեւաւորել այն ամուր համակարգը, որն ունակ կը լինի դիմագրաւելու առկայ եւ աւելի խորացող ու բազմապատկուող մարտահրաւերներին:

Իսկ ի՞նչ անել, եւ որտեղի՞ց սկսել ազգային նոր գարթօնը: 34 տարի առաջ հայութիւնը մի օր արթնացաւ եւ պարզեց, որ իր առջեւ ցցուած է կենսական մի հարց, որը մինչ այդ կարծես գոյութիւն էլ չունէր: Հասկանա-

լի դարձաւ, որ հայութեան ապագան կախուած է Արցախի խնդրի լուծումից: Պայքարի անհրաժեշտութեան գիտակցութիւնը կարճ ժամանակում նպատակի շուրջ ձեւաւորեց համագային միասնականութիւն: Եւ այժմ՝ երեք տասնամեակի ճանապարհ անցնելուց յետոյ, յայտնուել ենք նոյն կոտորած տաշտակի առաջ, երբ մի շարք առումներով իրավիճակն աւելի տագնապալի է, քան այն ժամանակ: Կրկին ակնյայտ է, որ Հայաստանի վերջնական անկումը, ինչին փորձում է հասնել ցեղասպան թշնամին, կը լինի Արցախի խնդիրը թաղելուց յետոյ: Այլ խօսքով՝ բանալին կրկին Արցախում է, եւ եթէ այդ բանալին ընկնի թշնամու ձեռքը, նա կը փակի Արցախի դուռը եւ ապա իր առջեւ կը բացի Հայաստանի դռները՝ որպէս միջանցք, որպէս անկաւանդ, ռազմավարական նշանակութեան բնակավայրեր եւ այլ տարածքներ (ըստ էութեան, այս ծրագիրն արդէն իսկ ընթացքի մէջ է): Իւրաքանչիւր նոր ձեռքբերում թշնամու դուրս կը բերի նոր դռների առջեւ, եւ դրանցից ներս մտնելու յաւակնութիւնը կը վերանայ միայն այն ժամանակ, երբ հայութիւնը կը կորցնի իր վերջին միջնաբերդն ու ինքնապաշտպանութեան հնարաւորութիւնը: Այս ամէնի մասին են վկայում մեր երեքամետայ պարտութիւնն ու նահանջը, որոնցից յետոյ էլ խաղաղութեան դիմաց թըշնամիները պահանջում են նոր ու կոնկրետ գիշումներ:

2022 թ. Սեպտեմբերի 2-ին Արցախի ու Հայաստանի հայութիւնը ոտքի ելաւ՝ կրկին խօսելու Արցախի փրկութեան, նրա օրինական իրաւունքների պաշտպանութեան մասին: Մենք դատապարտուած ենք եւս մէկ անգամ սկսելու Ղարաբաղեան շարժումը, որի միջոցով եւ որին զուգահեռ կարող են լուծուել ազգային միւս կենսական հիմնահարցերը, ինչը որ տեղի ունեցաւ 1988 թ. Ղարաբաղեան շարժման ժամանակ: Չմոռանանք, որ հենց վերագարթօնքի այդ շարժման ընդերքից ծնուեց Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման եւ ազգային նոր վերածնութեան գործընթացը:

Այսօրուայ դիմադրական շարժումը կարող է համագային ընդգրկում ունենալ, եթէ յստակօրէն ներկայանայ իր գաղափարախօսութեամբ եւ նպատակներով, իսկ Նիկոլին հեռացնելու ցանկութիւնը այդպիսի գաղափար եւ նպատակ չի կարող լինել: Նիկոլն ու Նիկոլիզմը՝ որպէս չարորակ ուռուցք ազգային օրկանիզմում, որպէս աւելորդ եւ անպիտան գոյացութիւն, կը մեռնեն ու դուրս կը շարտուեն, երբ օրկանիզմը սկսի առողջանալ:

Արցախեան շարժումը մեզ դուրս կը բերի պարտութիւնների շրջափուլից եւ սեղանին կը դնի նոր օրակարգ՝ մեր օրակարգը, եւ մեր օրակարգով Հայաստանը կը դառնայ իր խօսքն ունեցող եւ տեսակետը պաշտպանող գործօն: Երբ 1988 թ. սկսուեց Արցախեան շարժումը, արտաքին ոչ մի ուժ դրա նպատակները չէր ընդունում, որովհետեւ այն գալիս էր խախտելու հաստատուած սթաթուս քունն եւ յաւակնում էր ձեւաւորելու նոր իրականութիւն:

Պայքարի միասնական բռունցքի վերածուած ազգը յատկապէս ռազմական յաջողութիւնների միջոցով ստեղծեց այդ նոր իրականութիւնը, որի հետ սկսեցին հաշուի նստել օտարները, եւ որի շնորհիւ Հայաստան-Արցախը հաստատեց յարաբերական խաղաղութիւն որոշակի ժամանակահատուածի համար:

Ազգային-պետական կեանքի փորձութիւնների եզրագծին յայտնուած հայութեան հերթական պոռթկումի համար պակասող խայծը ազգային գաղափարն է՝ նպատակը, այդ նպատակին տանող ճանապարհային քարտեզը եւ այն առաջնորդները, որոնք դրօշը կը վերցնեն ու կ'առաջնորդեն ժողովրդին:

Կարող է դիմադրութեան ներկայիս շարժումը ստանձնել այդ դերը եւ որդեգրել նոր օրակարգը: Գուցէ սխալ է, ներկայիս շարժումն ասելը, որովհետեւ նրանք, ովքեր կը գլխաւորեն արցախեան նոր շարժումն ու ազգային նոր գարթօնը, կը սկզբնաւորեն դիմադրութեան համահայկական նոր շարժումը:

«Դրօշակ» թիւ 9, 2022

Ո՛Վ ՊԻՏԻ...  
Սկիզբ՝ էջ 5

Նելութեան դատին ոտքով-ձեռքով նուիրուելու: Եւ բարեբախտաբար կա՛ն այդ ուժերը: Իմ կուսակցութիւնս առաջին օրէն եւ անվերապա-հօրէն կը գտնուի անկեղծ գիտնորի այդ դիրքերուն վրայ:

Ազգը երախտապարտ է Վեհափառ Հայրապետին իր այս կարեւոր նախաձեռնութեան համար: Մեր պատմութեան այս ճակատագրական պահը մենք պիտի դիմագրաւենք մեծագոյն իմաստութեամբ եւ մեծագոյն խիզախութեամբ: Եւ այսօր է, որ մենք պիտի կարենանք սահմանել եւ նուիրագործել մեր ազգային միասնականութիւնը իր բոլոր էական գործօններով:

Մեր ակնկալութիւնն է, որ Վեհափառ Հայրապետի ներկայ նա-

խաձեռնութեան յաջորդ քայլը անյապաղ ի մի բերէ երկրի բոլոր գըլխաւոր քաղաքական ուժերը հակաճգնաժամային վճռորոշ օրակարգի մը շուրջ: Օրակա՛րգ՝ որ, առաջին հերթին, ընդգրկէ՝ (ա) Փաշինեանական համակարգի վճռական լուծարումը, (բ) բանակի վերակազմաւորումն ու վերապարենաւորումը եւ (գ) ազգային ընդհանուր զօրաշարժի անյապաղ իրագործումը:

Ժամանակը մերը չէ: Ժամանակը թշնամին կը պատկանի: Մենք գայն պիտի խլենք արագ եւ վճռական քայլերով եւ խիզախեցնել ինչպէս միշտ: Զանի որ ժամանակն է վերստին ազատագրելու մեր սրբազան հայրենիքը թշնամիին ճանկերէն: Ժամանակն է վերստին կերտելու մեր յաղթանակը: Եւ Տէր ընդ մեզ:

# ՌԿ ՊԻՏԻ ԿԵՐՏԵ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ



Կարո Արսենյան

Արդեն անցած են երկու օրեր Ամենայն Հայոց Հայրապետի նախաձեռնության վրային եւ դեռ բաւարարող ոչ մէկ գեկոյց դրուած է հանրութեան սեղանին: Լռութիւնը խլացնող է:

Առայժմ չկայ որեւէ նշան, որ թելադրէ, թէ գոյացած է համաձայնութիւն ՅՅ եւ ԱՀ նախկին նախագահներուն միջեւ ներկայ պահու ազգային միասնակա-



նութեան եզրերը սահմանող: Մինչ այդ թշնամին մտած է մեր հողերէն ներս: Թշնամին արդէն խլած է հարիւրաւոր գոհեր: Թշնամին կը սրբի՝ մեզ հասկանալու իր ոճիւրը ամենուրեք: Թըշնամին տեղահան կ'ընէ մեր ժողովուրդը: Եւ, - ամէնէն ահաւորը, - ան կը վայելէ մեծապետական ուժերու բացայայտ կրակաբանութիւնը: Եւ այս բոլորին դիմաց՝ Փաշինեանական համակարգը՝ որ ողբալիօրէն անատակ է երկրին տիրութիւն ընելու եւ պատրաստ է անձնատուութեան, նահանջի, դաւաճանութեան: Պարզ է, որ դասակարգ հասած է ոսկորին: Մի՛ գարմանաք ուրեմն երբ ժողովուրդը կը համբերէ եւ պատասխաններ կը պահանջէ:

Համացանցի աղբիւրներէն կը լսենք, որ այս դանդաղութեան պատճառով Նախ. Լեւոն Տէր Պետրոսեանի տարակարծութիւններն են, որոնք ընթացք տուած են բուռն քննարկումներու: Իրեն կը վերագրուի «գազաբաժողով»ի տեղքայլը: Պէ՛տք է, հետեւաբար, ենթադրել, որ գործընթացը արդէն մտած է փակուղի: Պէ՛տք է եզրակացնել, որ երկրի աւագանին չարաչար ծախողած է ազգին հանդէպ իր բարոյական մեծ պարտաւորութեան մէջ: Ես կ'ուզեմ հաւատալ, որ այդ չէ պարագան: Կ'ուզեմ պնդել, որ ընդհակառակն գործընթացը ամրապնդման ընթացքի մէջ է...

Ես կը կարծեմ, թէ կը դիմենք դէպի մէկ շրջադարձային հանգրուան: Ես համոզուած եմ, որ հակառակ նախագահներու միջեւ դրսեւորուող տարբերութիւններուն՝ այնուամենայնիւ նախագահներու այս աննախընթաց ժողովը կենսական կը համարէ Փաշինեանական համակարգի շուտափոյթ, բայց նաեւ՝ անցնցում, լուծարումը: Հետեւաբար պէտք է անպայման ակնկալել, որ ժողովը ներկայիս գտնուի Վարչապետ Փաշինեանի հետ թե՛ թանկացութիւններու բովին մէջ ապահովելու համար այս վերջինի անմիջական հրաժարականը: Կը կրկնեմ. ես համոզուած եմ, որ թէ՛ Վեհափառ Հայրապետը եւ թէ՛ ժողովին մասնակիցները հրամայական կը համարեն կանխել որեւէ հաւանական քառս իշխանափոխութիւն իրագործելու բովին

մէջ: Այսօր, երկրին առջեւ ծառայող մեծ մարտահրաւերն է յաղթահարել այս տագնապը առանց սպառնելու երկրին ներուժային պաշարները ներքին խռովութեանց ճակատին վրայ, որպէսզի կարելի ըլլայ յաջողապէս դիմագրաւել պատերազմի սպառնալիքը, որուն դամոկլեան սուրը կախուած է երկրին վրայ: Իմ կարծիքով, մենք, որպէս պետակա-

նութիւն եւ որպէս ազգ, պերճանքը չունինք ժամավաճառութեան: Եթէ կան տարակարծութիւններ նախագահներու միջեւ, կարելի է, որ անոնք արագօրէն հարթուին հնարաւոր դարձնելով ազգային միասնակաւորութեան գոյաւորումը առանց այլեւայլի:

Բայց անշուշտ հնարաւոր է, որ նախագահներու «գազաբաժողով»ը իսկապէս գտնուի փակուղիի մէջ եւ մենք չունենանք միաձայնութիւն եական հարցերու ոլորտին մէջ: Եթէ այս է կացութիւնը, գոր կը դիմագրաւենք ներկայիս, պէտք է ցաւիլ այդ փաստին համար, բայց բնաւ կանգ չառնել հոն:

Ազգային միասնակաւորութիւնը չ'ենթադրէր տեսակետներու լիակատար նոյնութիւն բոլորին կողմէ: Ան անկասկած կ'ենթադրէ հասարակութեան զլխաւոր շերտերու կարողութիւնը գերամեծար նպատակներու շուրջ համաձայնութիւն գոյացնելու: Այս իսկ պատճառով, ազգային միասնակաւորութեան խարխիւր պէտք չէ անպայման փնտռել նախկին նախագահներու ոլորտին մէջ: Բնականաբար ազգը մեծապէս կը շահի, եթէ անոնք իրենց բարոյական հեղինակութեամբ յաջողին միաձայնութիւն գոյացնել հայ անկախ պետականութեան յենարան հանդիսացող արժեհամակարգի եզրերուն, հայոց հայրենիքի տարածքային ամբողջականութեան եւ մեր երկրի ինտելիքութեան հիմնական սկզբունքներուն վրայ: Բայց եթէ կարելի չեղաւ հասնիլ նմանօրինակ միաձայնութեան, թող յստակօրէն հնչէ մեծամասնութեան ձայնը եւ վերջ: Ի վերջոյ ազգային միասնակաւորութիւնը պիտի կերտուի ոչ այնքան նախագահներու, այլ երկրի քաղաքական ուժերու միակամութեան յայտարարին վրայ: Եւ զայն կերտողները պիտի ըլլան այն գործօն ուժերը, որոնք կը ցուցաբերեն քաղաքական ամուր կամք երկրի լի-

## Փաստաբանին Անկիւնը

### ԻՄԱՆԱՆՔ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ



Փաստաբան Մարիա Գաբրիէլեան

«Գանձասար»ի այս սիւնակը կը միտի իրագրել դարձնել հասարակութիւնը զինք հետաքրքրող սուրիական օրէնքներուն: Առ այդ, պատրաստակամ ենք ընդունելու օրէնքներու վերաբերող ձեր լուսաբանական հարցումները եւ թերթին ճամբով պատասխանելու անոնց: Ձեր հարցումները կրնաք ուղարկել հետեւեալ էլեկտրոնային հասցէին (E-mail) [mariavaroujan@hotmai.com](mailto:mariavaroujan@hotmai.com):  
**Մեր իրաւունքները պաշտպանուած են օրէնքներով՝ իմանալք եւ պաշտպանուիլք:**

«Գանձասար»

### ՎԱՐՁԱՎԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒ ԵՒ ԼԻԱԶՕՐԱԳՐԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

Պատերազմի ծանր տարիներուն, մարդիկ հապճեպով գաղթեցին: Անոնք նոյնիսկ չհասցուցին իրենց կալուածները վաճառել եւ կամ անորոշութեան մէջ ըլլալով չկրցան վճռել վաճառելու հարցը: Այս կացութեան մէջ անոնք իրենց կալուածներու բանալիները յանձնեցին ապահով հարազատի կամ բարեկամի մը: Իսկ երբ անոնք բացակայութիւնը երկարեցաւ, անոնք կամքով կամ կամքին հակառակ, անոնք, որոնք մօտ կը գտնուէին տան կամ խանութի բանալիները՝ փորձեցին օգտուիլ կամ օգտակար դառնալ սեփականատիրոջ եւ կալուածը վարձակալեցին: Ժամանակ մը ետք յստակացաւ, որ վարձու տուողը այս գործընթացը կատարելու իրաւունք չունի, հետեւաբար դատական խնդիրներ յառաջացան:

Առ այդ, առաջը առնելու համար նմանօրինակ խնդիրներու մէջ իյնալուն, կալուած մը վարձելէ առաջ թելադրելի է.

ա. -Վարձակալութեան տրուելիք կալուածին կալուածային յայտը պահանջել եւ ոչ թէ սեփականագիրը: Ինչո՞ւ, որովհետեւ կրնայ կալուածատերը փոխուած ըլլալ եւ այդ մէկը յստակ կ'ըլլայ միայն յայտին եւ ոչ թէ սեփականագիրին մէջ: Առաւել պէտք է կալուածի յայտը օրուան թուականը կրէ, ապա թէ ոչ նոյն սխալին մէջ ինկած կ'ըլլանք:

բ. -Եթէ վարձակալութեան յանձնողը տեղեկացնէ, որ ինք կալուածատերը չէ, սակայն կալուածատիրոջմէ լիազօրագիր ունի, այս պարագային վերավաւերացուած (սոր թուականով) լիազօրագիր պահանջել, որովհետեւ կրնայ կալուածատերը վստահորդ մեկուսացուցած ըլլալ, հետեւաբար ստորագրուած պայմանագիրը օրինական ուժ չ'ունենար:

Լիազօրագրին մէջ ստուգել թէ վարձու տալու իրաւունք վերապահուած է անոր:

գ. -Եթէ կալուածին մէջ իրեր կան, այդ մէկը անպայման պէտք է յիշատակել վարձակալութեան պայմանագիրին մէջ եւ կամ յաւելուած գիրով մանրամասնութեամբ արձանագրել (օրինակ յիշուի կահկարասին կամ էլեկտրական գործիքներն ու սարքերը (սառնարան, հեռուստացոյց, եւ այլն), անոնք ինչ վիճակի մէջ ըլլալը (սոր են, մաշած են, կտրուած են, գործածութենէ դադարած են, եւ այլն):

դ. -Պայմանագիրին ներքեւ երկու կողմերուն կողքին թող երկու վկաներ եւս ստորագրեն, այդ մէկը աւելի կ'ամրագրէ պայմանագիրը:

ե. -Հարկ է, որ պայմանագիրը վաւերացուի պետական համապատասխան գրասենեակներու կողմէ: Այս մէկը շատ գործ կը խնայէ խնդիրներ ծագելու պարագային:

### ԼԻԱԶՕՐԱԳՐԵՐ

Փոխադրամիջոցներու սղութեան եւ պենզիկի ապահովման դժուարութիւններու մեր ապրած պայմաններուն մէջ լիազօրագիր տալու գործը աւելի կազմակերպուած կատարելու եւ քանի մը անգամ դատարան երթալ-գալու խնդիր չունենալու համար կարելի է իմանալք որ. -

ա. -Լիիրաւ (ընդհանուր) լիազօրագիր տալու պարագային հարկ է, որ կողմերու անհատական տոմարագրական յայտը ձեռքի հետ ունենաք, իսկ մասնակի լիազօրագրերու պարագային անձնագիրի պատճենը բաւարար է:

բ. -Լիիրաւ (ընդհանուր) լիազօրագրերը ապահովական արտօնագիր կը պահանջեն, որ 12-18 օր ժամանակի կը կարօտի, հետեւաբար եթէ այս գործին համար քանի մը օրուան համար եկած էք Սուրիա, հարկ է ձեր առաջին գործը այդ ըլլայ:

գ. -Մասնակի լիազօրագիրը եթէ յատուկ կալուածի մը կը վերաբերի, զանկա ծախելու, վարձակալելու կամ անվճար փոխ տալու իրաւասութեան բովանդակութեամբ, հարկ է ունենալ:

ա. -Ապահովական գրասենեակի վաւերացում:

բ. -Կալուածին յայտը:

Ի դէպ աւելցնենք, որ ապահովական գրասենեակներէ արտօնագիր ստանալը պարագայական պայման է, այսինքն՝ երկրի ապրած պայմաններուն բերումով այս ընթացքը որոշուած է, հետեւաբար պայմաններու փոփոխութեամբ կրնայ այս մէկը չեղեալ համարուիլ: Այս ուղղութեամբ նորութիւններ արձանագրուելու պարագային մամուլով տեղեկ կը պահեալք մեր ընթերցողները:

Թուրքիոյ նուրջ

ԱՆՊԱՐԱՆ ԳԻ ԾՐԱԳՐԵՐ ՏՈՆԵՃՔԻ, ԼՈՒԿԱՆՍՔԻ, ԽԵՐՍՈՆԻ ԵՒ ԶԱՓՈՐՈՒԹԻ ԵՐԶԱՆՆԵՐԸ ԻԲՐԵՒ ԹՈՒՍԻՈՅ ՄԱՍ ՃԱՆՉՆԱԼ

Թուրքիան չի պատրաստուիր Տոնեցքի, Լուկանսքի, Խերսոնի եւ Զափորոժիէի շրջաններուն Ռուսիոյ կազմ մտնելը ճանչնալու, ինչպէս եղաւ Խրիմի պարագային: «Երկիր» կը հաղորդէ, որ



այս մասին երէկ յայտարարած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլուժ Զաւուշօղլու՝ Թուրքիոյ մէջ տրուած մամուլի ասուլիսի ընթացքին:

«Մենք Խրիմի բռնակցումը չենք ճանչնար եւ ատոր մասին Ռուսիոյ կ'ըսենք: Մենք մտահոգութիւն յայտնած ենք Տոնեցքի, Լուկանսքի, Զափորոժիէի եւ Խերսոնի հանրաքուէներուն վերաբերեալ: Մենք հասկնուցած ենք, որ այդ հանրաքուէները չենք ճանչնար», ընդօժան է Զաւուշօղլու:

ԷՐՏՈՂԱՆ ԳԻ ԲԱՅԱՌԵՐ ՓԱՆԻՆԵԱՆԻ ՇԵՏ ՃԱՆԿԻՊՈՒՄԸ

Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան ԱՄՆ կատարած այցելութեան աւարտին հարցազրոյց տուած է թրքական լրատուամիջոցներու ներկայացուցիչներուն: Այդ ընթացքին ան, ի թիւս այլ նիւթերու, անդրադարձած է նաեւ ԶԶ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ կարելի հանդիպումին:



Էրտողան յայտնած է, որ նման հանդիպում հաւանաբար կարելի կը դառնայ իրականացնել Զեփիոյ մայրաքաղաք Փրակի մէջ, ուր տեղի պիտի ունենայ Եւրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովը:

«Այժմ մենք կը քննարկենք Փրակի մէջ տեղի ունենալիք գագաթնաժողովին մեր մասնակցութեան հարցը: Եթէ այնուամենայնիւ որոշենք մասնակցիլ, հաւանաբար Զայաստանի վարչապետ Փաշինեանն ալ այնտեղ ըլլայ ու թերեւս այնտեղ բոլոր հարցերը քննարկելու կարելիութիւն ունենանք», ըսած է Էրտողան:

Վերջինս յայտնած է նաեւ, որ իրենք կովկասեան տարածաշրջանին մէջ որոշ քայլեր պիտի առնեն յառաջիկային:

Երիտասարդական Ուպնեան

ԿԵԱՆՔԻՍ ԵՐԱԶՆԵՐՈՒՆ ԾԱՄԲԱՆԵՐՈՎ

Սոնա Մատարեան

Վան, Աղթամար վանք, Նեմրուժ սար  
Ահեղագօր հոսքով եւ հրաշալի երեւոյթով «Բերքի» ջրվեժներու փայլփլող ջուրերու տարափով եւ անցեալի կարօտի երագներով ու ներկայ ափսոսանքներով տարուած էի. պապերուս հարագատ պատմական հողերն ու հոսուն ջուրերը այսօր, իմ ժողովուրդիս ծառայող վայելք չեն, այլ...:

Մտորումներուս հետ հասած էինք անթիւ ու անհամար պատանի սերունդներ թրծած եւ ազգային ու հայրենական ոգիով դաստիարակած, յեղափոխական մեծ գրողի՝ Րաֆֆիի «Կայծեր» վէպի



հերոսներ՝ Ասլան, Կարօ, Սագօ եւ Ֆարիհատի այգեստան Վանը, որ իր գեղադէմ դաշտային դրուածքով, կղմիտրե ծածկ ունեցող տանիքներով, միայարկանի կառոյցներով եւ տարածուած շուկաներով մեզ դիմաւորեց: Զայկական Վանի գորգեր ցուցադրուած էին վաճառքի, կային նաեւ կնոջական ոտնամաններ եւ պայուսակներ՝ գործուած Վանի հայկական արուեստի ոճով եւ երանգներով... անմիջապէս մտածեցի, որ ասոնք գործող վարպետը հայ ըլլալու էր, մօտեցայ եւ հարց տուի տիրոջ, թէ ո՞ր էր իր վարպետը, որուն միջոցաւ սորված էր Վանի յատուկ այս արուեստը: Ան նախ գարմացաւ որ իր լեզունով՝ թրքերէնով հարցում ուղղեցի եւ հարցումիս հարցումով պատասխանեց.

«Իսկ դուն ուրկէ՞ սորված ես մեր լեզուն»... հայու արիւնը խուժեց գլուխս. «Իմ պապերս այս հողերուն արդար տերերն էին: Ձեր կողոպտիչ եւ անարգ պապերը մորթեցին ու վտարեցին մեզ այս հողերէն, ահաւասիկ ես, վերապրող պապիկիս հետ սորված եմ ձեր լեզուն եւ որ հիմա արդար բարկութեամբ կը պատասխանեմ ձեր լեզունով», ըսի... եւ խոր շնչով մը առի, յիշեցի որ մեր առաջնորդին խոստացած էի հարց չստեղծել... ներող եղէ՛ք, արն. Արման...: Վարպետը գլխահակ լուռ մնաց... «Պապիկս փրկուած է ջարդէն եւ ան փոխանցած է մեզի այս արուեստը... Մենք նոյն արիւնը ունինք մասամբ...», ըսաւ վարպետը: Լուռ էինք երկուքս:

Հաւատա՞լ, թէ...:  
Պապերուս յիշատակին Վանի գործերէն գնեցիք ու «հանգիստ» սրտով հեռացանք:

Յաջորդ մեր կայանը ուղղուեցանք. այլազգի գթօսաշրջիկներով բեռնաւորուած մեր նաւը կը յառաջանար Վանայ լիճի լազուարթ կապուտին գուլալ ալիքներով, ուր մեր յուզիչ, բայց մասամբ յաղթական «Ախթամար» երգով հետաքրքրեցիք եւ ապշեցուցիք ճամբորդները: Լաց ու խիստ կար մեր ձայներուն մէջ: Վանայ լիճին ջուրը կարծեք անբաժան կ'ընկերանար մեզի, ան նաեւ հաւանաբար կ'երգէր, կը գոռար եւ արցունքոտ ալիքներով կը յառաջանար մեր նաւարկութեան հետքերով: Ուրքս հագիւ ափը դրած էի, եւ արդէն, չեմ յիշեր ինչպիսի՞ խոր հոգոց մը հանեցի ու արցունքներս յորդեցան, չէի սրբեր արցունքներս, ազատօրէն թող թափին, Ա'իւթամարի մեծ սիրոյ յիշատակին՝ մտածեցի: Հապա վանքը... Աստուած իմ, իսլամական «Պայրամ»-ին առիթով խիտ երթեւեկութիւնը լեցուցած էր վանքին շրջապատը, եւ թուրքերով ու քիւրտերով լի բազմութիւնը վանքի խորանին մօտ՝ շշմեցուց մեզ: Այդ ինչպէ՞ս եղաւ, որ մեր տունն ու տեղը, մեր վանքերն ու պարիսպները հիմա մեզ «հիրաբար» կը դիմաւորէին... Զարմանալի՞ է, թէ չէ...:



«Աւա՛ր փառացս անցաւորին»...  
Այսօր, մենք, լուռ ու մո՛նջ... մնացեալը կը յ-ա-ն-ձ-ն-ե-ն-ք...:

Լուռ էր Աղթամար կղզին ու Ս.Խաչ վանքը: Հո՞ծ եւ օտարոտի բազմութիւն մը կ'աղմկէր ու կը քրքար վանքին շուրջ եւ նոյնիսկ խորանին շուրջ եւ վրան: Է՛հ, անոնց համար Ախթամարը աղօթատեղի չ'էր, այլ գթօսելու եւ գուարճանալու եւ նկարուելու վայր...:

ՏԷ՛Ր ՈՂՈՐՄԵՒ՛ն խոր յուզումով ու սրտափուխ ձայնով մը հնչեց մեր կոկորդէն ու ցայտելով չորս դին լռեցուց բազմութեան աղմուկը... յանկարծ ուսս ցնցեցին... արցունքոտ աչքերս բացի, թուրք գիւնուորը, որ ձեռքի կտրուկ նշանով մը լռութիւն կը հրահանգէր... հոգս չէր, դարձեալ փակեցի փղձկոտ աչքերս ու հոգիէս փխած աղօթքն առ Աստուած հասցուցի իր աւարտին եւ դուրս նետուեցայ՝ շունչս բաւարարելու համար... ոստիկանը հետեւեցաւ ինձի, բայց շուտով, ինքն իր մէջ, հասկցաւ որ սովորական հայ մըն էմ, կորուսեալներուս յիշատակին՝ արտասուելու եկած եմ եւ ոչ թէ թալանուածը, այս անգամ, «իրաւունքով» վերցնելու եկած եմ, կարծեմ այսպէս մտածեց ու հեռացաւ:

Կլանուածի եւ թալանուածի հոգեբանութեամբ շրջեցանք վանքին արտաքին մասը, ուր պատերուն վրայ անշնչացած սրբանկարներն ու գրութիւնները յոյս ներշնչեցին: Աղթամար վանքէն բաժանումը, կրկին վանայ լճի կապուտակ ջուրերով, առաւել ցաւոտ էր. Է՛հ, բաժանումը միշտ ցաւոտ եղած է, մտածեցի, սակայն դարմա՛նը: Փորձեցիք հաւատալ, որ գտանք՝ ափին ճաշակուած Վանայ Տարեխով... Համե՛ղ էր... Զա՛տ- Զա՛տ համե՛ղ... բայց, ինչպէս փշո՛տ, նոյնպէս ցաւո՛տ կորուսեալի յուշերով:

Խրիմեան Հայրիկի շունչով եւ հետքերով, հողին ուժն ու խորութիւնը ապրեցանք, երբ կը շրջէիք ցանուած դաշտերուն մէջ՝ «Հայրիկ»-ին ոտնահետքերով: Հոգեւորական մը, որ ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ հոգատա՛ր հայր էր, ցանող ու հնձող էր, գիւնուած էր հայրենասիրութեամբ, գնեք ձեռնի պատգամած էր իր ժողովուրդին.

«Ծախեցէ՛ք ամէն ինչ եւ ԶԷՆՔ գնեցէ՛ք, թշնամին տիւ ու գիշեր գիւնուած ձեր շուրջը կը դառնայ...»: Սակայն՝ ձայն բարբառոյ յանապատի. մենք մեր դասը չառինք ու չառինք... ա՛ն այսօր...:

«Այգեստան Վան»-ին հրաժեշտ տուիք, խոստանալով որ ցրիւ եղած իր գաւալները, խումբ առ խումբ, յարատեւ պիտի փափաքին այցելել Վան, իրենց ուխտը նորոգելու, որպէս մեր իմաստուն «Հայրիկ»-ին թողնելու ու ծոռերը...:

Անցանք Խալտեան, Ռշտունեաց դարպասներով, Մեծի Դուռով: Հեռուէն երեւցաւ խորիստ Վանի բերդն ու անցեալի հայ հեթանոսական մեծ սրբավայր, աշխարհի 8-րդ հրաշալիքը համարուող Նեմ-

## Պրիմակետ

# ԳԻՐԻՆ ՈՅԺԸ



Մարուշ Երամեան

Երբ յանձն կ'առնես թերթի մը կամ հանդեսի մը մէջ սիւնակ ունենալ, անոր նիւթ հասցնելը քեզ չի մտահոգեր այնքան, որքան յարմար նիւթ մը արծարծելը, որովհետեւ մամուլին պարագան տարբեր է գրագետի մը համար. մամուլին մէջ կը գրես մի'շտ ընթերցողը նկատի առնելով, մինչ գեղարուեստական գրականութեան, մանաւանդ քերթողութեան պարագային գրականութեան սերն ու արուեստն են միայն որ կը մղեն գրիչը:

Վերջին օրերուն, ատրպէյճանական կրկնուող յարձակումներուն առջեւ մեր հոգեկան վիճակը նկատի առնելով կը մտածեմ՝ գրեմ այնպէս, որ ընթերցողը իր ծանր առօրեան եւ հոգերը մոռնայ, թէ՞ գրեմ այնպէս, որ



ներկայի ծանր իրականութիւնը լաւագոյն ձեւով ներկայացուի:

Մեր գրականութեան մէջ երբեք չեմ հանդիպած պատումի մը, ուր բանաստեղծութիւնը մէկու մը՝ բանաստեղծին թէ իր մտերիմներէն մէկուն կեանքը փրկած ըլլայ (թէ լսածեմ անշուշտ՝ «քերթուածը կ'ուտուի՞», այսինքն՝ քերթուածը փոր չի կըրտացներ), հակառակ

անոր, որ մեր թիւին համեմատ բանաստեղծներուն եւ գրագետներուն տոկոսային թիւը բաւական բարձր է:

Թերեւս պատճառը այն է, որ մեր գրագետներուն համար օրագրութիւնն ու յուշագրութիւնը այնքան ալ կարեւոր ժանրեր չեն, այլ խօսքով՝ մեր գրագետներէն քիչերն են, որոնք իրենց օրագրութիւնները կամ յուշագրութիւնը լոյսին տուած են:

Թերեւս նման դէպքեր պատահած են, պարզապէս մենք ենք որ չենք լսած, իսկ ինչպէ՞ս կարողացած ըլլայինք, երբ անոնք գրուած իսկ չեն:

Բայց ահա որ առօրեայ ընթերցումներէս մէկուն մէջ դեմ յանդիման կու գամ հետեւեալ յօդուածին, որ կը կրէ «Թէ ինչպէս քերթողութիւնը կեանքեր կը փրկէ» խորագիրը:

Երեք ընկերներ, հազիւ իրենց քսանականներուն սկիզբը, կը ճամբորդեն Ալաւսքայի խորերը: Երբ գիրենք ինչ հասցնող փոքրիկ նաւակը կը հեռանայ եւ բացարձակ լռութիւնը կ'իջնէ սառած դաշտերուն վրայ, յանկարծ մեծ աղմուկով հսկայ ծառ մը արմատախիլ կ'ըլլայ եւ թափով կ'իյնայ, իր տակ ճգմելով ընկերներէն մէկը:

Կը յաջողին օգնութիւն խնդրել: Եւ մինչ կը սպասեն, անոնցմէ մէկը, կարելիին չափ մօտիկ պառկելով ծառին տակ ճգմուած եւ ցաւերու մէջ խեղդուած ընկերոջ, գայն ամէն գնով արթուն պահելու ջանքով (քնանալը մահ պիտի նշանակէր այս պարագային) կը սկսի ... բանաստեղծութիւններ ասմունքել: Կ'արտասանէ ինչ որ կը յիշէ դպրոցական եւ համալսարանական օրերէն:

Քսան տարի ետք, այդ վիրաւորուած ընկերը կ'ըսէ.

«Աստուծոյ ինծի հանդարտութիւնը կը ջարձրէր այդտեղ, երբ սառած գետնին վրայ անկարող կերպով փռուած էի»:

Իսկ հեղինակը ինք կ'ըսէ.

«Նոյնիսկ ասմունքս այդ քերթուածներուն, – որոնք ինծի համար միշտ ալ կը խտացնէին անբողջական անկարողութեան պահ մը, – վերածուեցաւ պատահականօրէն լուծումներ գտնելու կատարեալ խորհրդանշանի մը»:

Կը յիշեմ նաեւ այն բոլոր պատմութիւնները, որոնք լսած կամ կարդացած եմ, պատերազմի ընթացքին գրուած օրագրութիւններու, կամ յուշագրութիւններու, որոնցմէ մէկը տեսայ Երեւանի ԳԱԹի (Գրականութեան եւ Արուեստի Թանգարան) պահեստներուն մէջ, պատերազմական յուշագրութիւն մը, գրուած Նայիրի Չարեանի կողմէ (բայց չհրատարակուած):

Կ'ըսուի նաեւ, թէ Դանիէլ Վարուժան, երբ տարուեցաւ դէպի ամառուի, հետը փոքր տետր մը ուներ, որուն մէջ, ըստ իր գաղթի եւ ջարդի ընկերներուն, անընդհատ կը գրէր: Ափսոս որ այսօր այդ տետրը չկայ, շատ հաւանաբար փճացուած է, բայց եթէ ըլլար, պիտի հաստատէր գիրին ոյժը այդ դժիւր պայմաններուն մէջ: Պիտի հաստատէր նաեւ մարդկային հոգիին անկտրուած հզօրութիւնը:

Աւելի թարմ օրինակ մըն է 44-օրեայ պատերազմին զոհուած Շանթ Նաւոյեանի (19 տարեկան) յետ մահու լոյս տեսած «Խօսողը Չգիտի, Իմացողը Չի Խօսում» գիրքը, որուն վերջին բաժինը գրուած է պատերազմին ընթացքին: Իր ամենէն ցայտուն խօսքը, որ կարդացողին վրայ տարօրէն կ'ազդէ, հետեւեալն է.

«Երբ լոյսը մեռնի, հանգիստ կը սպասենք նրա ծնունդին խաւարի մի-

ջից ... մենք լոյս կը դառնանք, որ երբ որ պետք գայ՝ հանգենք, առանց հարցնել ինչից, կամ ինչի»:

Մեպտեմբերի վերջին օրը Երեւանի մէջ կը սկսի «Գիրքի երեւանեան 5-րդ փառատոն»ը (եւ կը տեւէ մինչեւ Դեկտեմբեր 2), որուն առիթով հայրենի գրագիտուի Յասմիկ Յակոբեանը գրեր է իր դիմատետրի էջին վրայ, անդրադառնալով Դայաստանի պատերազմական վիճակին եւ գիրի ոյժին.

«Տարուան ամենակարեւոր գրական իրադարձութիւնը: Յոյս ունեմ, որ փառատոնը աւելի խաղաղ ու հանգիստ կ'անցկացնենք, քան այս օրերի տագնապն է: Ինքս պնդել եմ, որ փառատոնը լինի, չնայած որ օրուան կէտը ես էլ տագնապների մէջ եմ, բայց չեմ ուզում յանձնուել այս մահուան խուճապին: Չեմ ուզում, որ վախը յաղթի մեզ»:

«Ու մի բան էլ. երկու օր առաջ, երբ հերթական տագնապի նուպան էր սկսուել մօտս, մի կողմ թողեցի համակարգիչը, հեռախօսը, ֆէյսպուքն ու լրատուական դաշտը, տագնապներիս մէջ մօտեցայ գրապահարանիս ու որոշեցի փոշուց ազատել բանաստեղծական ժողովածուներս, որոնց վաղուց ձեռք չէի տուել: Ու յանկարծ ձեռքս ընկաւ Յովհաննէս Գրիգորեանի «Երբեք չմեռնես» ժողովածուն: Երբեք չմեռնես, երբեք չմեռնես՝ արձագանքում էր գիտակցութեանս մէջ մի կէտ. որոշեցի ամէն ինչ մի կողմ թողնել, բացեցի ու սկսեցի կարդալ գիրքը հենց թողթից. պետք է խոստովանեմ, որ վաղուց գրքից բանաստեղծութիւն չէի կարդացել եւ որ բանաստեղծութիւնը իրօք նման պահերի կարդալու, յոյզերդ թարգմանուած զգալու անմեկնելի զգացողութիւն է պարզեւում»:

«Ուզում եմ ասել, գտե՛ք ձեր սիրած բանաստեղծութեան գիրքը, գտե՛ք ձեզ վախից այն կողմ, մէկ այլ աշխարհ տանող գիրքը, կտրուե՛ք մի պահ լրահոսից ու տագնապալի լուրերից եւ գիրք կարդացե՛ք: Գիտեմ, շատ երկար չեք կարող, բայց օրուան մէջ կէտ ժամը, մէկ ժամը ամոքիչ ազդեցութիւն է մեր ջղային համակարգին համար»:

Այս տողերը գրողը Դայաստանի այս օրուան ծանր պայմաններուն մէջ ապրող կին մըն է: Ուրեմն որոշ կացութիւններու մէջ, կը մտածես, գիրը կը փրկէ ...

Կը կարծեմ թէ բառին ազդեցութեան ամենէն հզօր փաստերէն մէկը Նարեկն է, որուն բժշկելու յատկութիւնը ծանօթ էր հայերուն եւ կը գործադրուէր՝ Նարեկը կը դնէին հիւանդին բարձին տակ եւ հիւանդը կը լաւանար, մանաւանդ երբ քահանայ մը բարձրաձայն ընթերցումներ կատարէր անկէ: Անոր պատճառը անշուշտ նախ հաւատքն է, ապա բառերուն ստեղծած մագնիսական դաշտը, որ բարերար ազդեցութիւն կ'ունենայ լսողին վրայ:

Միջազգային համբաւ նուաճած սուրիացի արքայազմ բանաստեղծ Անտոնիս (Ալի Ահմատ Սաիտ) կը հաւատայ քերթողութեան կարողութիւններուն եւ կ'ըսէ հարցազրոյցի մը ընդմէջէն.

«Բանաստեղծութիւնը մանուկ մը չի մորթեր, ոչ ալ մարդ մը կը սպանէ, ոչ իսկ թանգարան մը կը կործանէ», ինչպէս նաեւ «բանաստեղծութիւնը երբեք լուծի չ'ենթարկուիր»:

Եւ կը վերջացնէ՝ «Այնքան ատեն որ մահը կայ, – իսկ մահը կայ, – նաեւ բանաստեղծութիւն պիտի ըլլայ: Բանաստեղծութիւնը երբեք կարելի պիտի չ'ըլլայ լռեցնել»:

## ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Ազգ. Պատուաբարանը կարիքը ունի միջնակարգի ուսուցիչի: Փափաքողները կրնան ներկայանալ Ազգ. Պատուաբարան կամ հեռաձայնել հետեւեալ թիւին՝ 4442022:

## ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Բեթել Վարժարանը կարիքը ունի տնտես հայրիկի եւ տնտես մայրիկի: Փափաքողները կրնան դիմել վարժարան առաւօտեան ժամը 9:00-էն 1:00 կամ հեռաձայնել հետեւեալ թիւին՝ 4659530:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Գալլէշեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝



### ՀԱՆԳՈՒՅԵԱԼ


### ԳԵՈՐԳ ԳԱԼԼԷՇԵԱՆԻ

մահուան սուգին: Դանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 2 Դեկտեմբեր 2022-ին, յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու մէջ, Նոր Գիւղ - Դալեպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Տիգրանեան (Սահակ Նալպանտեան) սրահէն ներս:

## «ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ 25-ԱՄԵԱՅ ԳԱՆՎԱԿԱՆՈՒԹԻՒՆ (1995-2020) ԱՐԺԵՒՈՐՈՒՄ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ»

Առաջին ակնարկով առանց դասական խորագրի այս գեղատիպ հատորը, (լրջ տեսած է Անթիլիաս 2021 թուականին, 642 մեծադիր էջերով վրայ տարածուած ճոխ բովանդակութեամբ մը, ազնիւ մեկենասութեամբ Տեր եւ Տիկին Կարօ եւ Սօսի Էշկիեանի (Լոս Անճելըս, ԱՄՆ), շուտով կը բացայայտէ իր իւրայատուկ խորքն ու նպատակը, երբ Յորեպար Յայրապետը հայ եկեղեցւոյ ժամանակակից այն մեծագոյն դէմքերէն է, որուն լուսազգեստ կերպարը իբրեւ հայ հոգեւորական եւ հայ մարդ կ'անդրանցնի ժամանակին ու միջոցին սեղմ սահմանագծումները, ստեղծելով յանկուցիչ տիեզերք մը ամբողջ, ուր որքան ալ վաւերական ըլլան տրուած վկայութիւնները, նկարագրութիւնները՝ հարազատ, գնահատումները՝ արդար ու արժան, անգոր կը մնան բացատրելու այն ուղիսնահոս լրջի ճառագայթումը, որ կը բաշխուի իբրեւ անանձնական ծառայութիւն, բարի խօսք ու գործ, իբրեւ Առաքելատիպ Յայրապետին՝ Առաքելական Ծառայութիւնը:



Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս իր ընտրութենէն անմիջապէս ետք արտասանած խօսքին մէջ, «ամբողջական ու յանձնառու...» ծառայութիւնը յայտնած էր, «...նոյն եւ մէկ եկեղեցւոյ. նոյն եւ մէկ ազգին. նոյն եւ մէկ հայրենիքին...»: Խորիմաստ խօսքեր, որոնք լաւագոյնս կ'արտայայտեն տեսլահար հոգեւորականին քահանայական, ծառայական, Յայրապետական գահակալութեան եւ ընդհանրապէս ամբողջանուէր կեանքին գոյն ու նշանակութիւնն տուող խոհերն ու մատձումները, ապրումները, որոնումները, տագնապները, կեցումները՝ հոգեւոր, ազգային, եկեղեցական, մշակութային, քաղաքական, պահանջատիրական եւ այլաբնոյթ խաչմերուկներով:

Արամ Ա. Կաթողիկոս իր Յայրապետական գահակալութեան անցնող քսանհինգ տարիներու ընթացքին եղաւ միջոց իր ժողովուրդին հետ եւ իր ժողովուրդին համար, հայ եկեղեցւոյ միութեան եւ ազգային միասնականութեան հոգեպարար տեսլականով շրջեղեց հայ ժողովուրդին զաւակները, աներեր եւ անտեղիտալի պաշտպանը մնալով հայ մշակոյթին, մեր հոգեմտաւոր արժէքներուն, հայ դատին ու ազգային պահանջատիրութեան, իսկ որպէս միջազգային դէմ դարձած հայ էքիմենիստ, անվիճելիօրէն անզուգական երեւոյթ մը հանդիսացաւ հայ իրականութեան ու միջազգային շրջանակներէ ներս հաւասարապէս:

Եւ այնպէս ինչպէս մեծութիւններու մասին յօդուածի մը սահմանափակ տողերով խօսիլ կարելի չէ, նոյնպէս եւ այս ուղեւշային գիրքին մասին, հետեւաբար պիտի ներկայացնենք զայն, առանց գրաքննադատական յաւանութիւններու, կարգ մը մէջբերումներով ամրագրելով մեր խօսքը: Պարզապէս միայն անոր ամբողջական ընթերցումէն ետք մեզի համար յըստակ դարձաւ, թէ իւրաքանչիւր տողին, նոյնիսկ բառ ու գիրին ետին անթերուած՝ Վեհափառ Յայրապետին վեհաշուք եւ շքեղ կերպարն է որ կը ձեւաւորուի անխարդախ, անկեղծ, անկաշկանդ, հոգեւորոգ վկայութիւններով ու հաստատումներով: Իսկ որոշ համեմատութեամբ մը, եթէ նոյնը ըսենք Նաեւ գիրքին ենթախորագիրներուն համար, ապա մնացեալը ուղեցոյցային վերնագրումներ են, յորեկեանական հատորին ընդհանուր երանգապակը հարստացնող:

Մանրամասնութիւններու անցնելէ առաջ յիշարժան է, թէ հատորին իրենց արժէքաւոր յօդուածներով, գրութիւններով եւ վկայութիւններով մասնակցութիւն բերած են սփիւռքահայ, հայրենի եւ օտար պետական-կառավարական բարձրաստիճան դէմքեր, մտաւորականներ, գրողներ, հոգեւորականներ, ազգային, համայնքային, միջ-եկեղեցական, միջ-կրօնական պատասխանատուներ եւ գործիչներ:

Գիրքին սկիզբը տեղադրուած «Պաշտօնական» ի բաժնին մէջ տեղ գրաւած են յաջորդաբար Լիբանանի Յայրապետութեան Նախագահին (Չօր. Միշէլ Աուն), ՀՀ Նախագահին (Արմեն Սարգսեան), ՀՀ Վարչապետին (Նի-

կոլ Փաշինեան), Արցախի Հանրապետութեան Նախկին Նախագահին (Բակօ Սահակեան), ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսին եւ օտար բարձրադիրք անձնաւորութիւններու չորս գրութիւնները (անգլերէն եւ ֆրանսերէն):

Հատորին գանազան բաժնիներուն մէջ արձանագրուած խօսքերուն շարքին, յատկանշական է Չօր. Միշէլ Աունի հետեւեալ հաստատումը (կուտանք թարգմանաբար).

«Քառորդ դար առաջ Արամ Ա. Կաթողիկոս ստանձնեց Հայ Ուղղափառներու Կաթողիկոսութեան պաշտօնը, եւ իր հոգեւոր գիրքին աւելցուց իր մշակոյթին, ոգեղինութեան, հաւատքի նախանձախնդրութեան ու հայրենասիրութեան փայլքը, ինք որ եկած էր յոյսին ծոցէն եւ հայ ժողովուրդի պատմական տառապանքին ձուլարանէն: Վերոյիշեալ բոլորին կը գումարուին անոր հաւատքը քաղաքակրթութիւններու եւ կրօններու միջեւ համակցութեան ու երկխօսութեան վերաբերեալ: Արամ Ա. Կաթողիկոս երկխօսութեան յատուկ համաժողովներու իր երկար մասնակցութեամբ փորձառութիւն ունի, ինչ որ զինք կը դարձնէ աշխարհին ուղղուած Լիբանանի բացառիկ ուղեղին հաւատարիմ կրողը...»: (Էջ 9)

Արմեն Սարգսեան իր կարգին կը հաստատէ. «Ստանալով փայլուն աստուածաբանական եւ փիլիսոփայական կրթութիւն Մերձաւոր Արեւելքի, Եւրոպայի եւ ԱՄՆ-ի հեղինակաւոր դպրոցներում եւ համալսարաններում՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Ձեր երկարատեւ հաւատարիմ ծառայութեան եւ վաստակած հեղինակութեան շնորհիւ քառորդ դար առաջ Դուք առժանացաք Մեծի Տանն Կիլիկիոյ աթոռին:

Աթոռ, որն առաջնորդել է մեր ժողովրդի տարբեր հատուածներին նրա պատմութեան փառքի եւ դէգերումների ընթացքում, եւ որի վերակազմակերպման ու վերածաղկման աշխատանքներին Դուք լծուեցիք Կաթողիկոս դառնալուց անմիջապէս յետոյ...»: (Էջ 11)

Յաջորդ՝ «Արժէքներու եւ Վկայութիւններ» բաժնով տրուած է Վեհափառ Յայրապետին համառօտ կենսագրութիւնը, Նաեւ Վարուժան Արք. Հերկելեանի ստորագրած «Ժողովուրդին Հետ, Ժողովուրդին Համար» խորագրեալ յօդուածը, ուր ի միջի այլոց յօդուածագիրը դիպուկ կերպով կ'ընդգծէ.

«Վերջին 25 տարիներու ընթացքին, Անթիլիասը, այդ «փոքր պատուհանը», վերածուեցաւ ընդարձակ դարպասի մը, ուր կը մտնեն գիտնականներ եւ իրաւաբաններ, մտաւորականներ ու աստուածաբաններ, կրօնապետեր ու բարձրաստիճան հոգեւորականներ, քաղաքական գործիչներ ու պետական ներկայացուցիչներ, երիտասարդներ ու փոքրեր, հայ թէ օտար, որոնք Վեհափառ Հօր գլխաւորութեամբ ու գործօն մասնակցութեամբ, լայնածաւալ աշխատանքներ կը տանին ժողովուրդի կեանքի բարելաւման, աստուածասիրութեան խթանման, մշակոյթի ծաղկման, հոգեմտաւոր արժէքներու կենսաւորման, մայրենի լեզուի ապահովութեան, հայ դատի եւ իրաւունքներու ձեռքբերման: Այդ դարպասէն ներս կը մտնեն մեր ժողովուրդի բոլոր զաւակները՝ քաջ գիտնալով որ Կաթողիկոսարանէն ներս Արամ Ա. Վեհափառ Յայրապետին առաջնորդութեամբ, հաւատքի առաքելութիւնը եւ ազգային ծառայութիւնն է որ կը ծաւալի ժողովուրդով ու ժողովուրդին համար»: (Էջ 45)

Ապա տասներեք վերնագրուած տարբեր բաժնիներով, «Հաւատքի Առաքելութեան Յայրապետը», «Ընկերային Ծառայութեան Առաքելը», «Ազգային Պահանջատիրութեան Անգիջող Յայրապետը», «Մշակութային Արժէքներ Վերակենսաւորողը», «Հայակերտումի ու Ազգակերտումի Յանձնառու Դեկավարը», «Հայաստան-Սփիւռք Գործակցութեան Ռահվիրան», «Երիտասարդութեան Պաշտպանը», «Շինարար Կաթողիկոսը», «Միջ-եկեղեցական Շարժումին Առաջնորդը», «Միջ-կրօնական Երկխօսութեան Ցատագրվը», «Տագնապները Խոհեմութեամբ Դիմագրաւող Յայրապետը», «Սփիւռքի Վերակազմակերպման Ցառաքատեսիլ Յայրապետը», «Մտաւորական Յայրապետը», ներկայացուած 43 յօդուածներուն ընդմէջէն պերճախօս կերպով կը պարզուին անցնող 25 տարիներուն Արամ Ա. Կաթողիկոսի բազմերես, բազմաճիւղ եւ բազմաբովանդակ լայնածաւալ գործունեութիւնները՝ Առաքելական Ծառայութիւնը:

Արդ, «Հայաստան-Սփիւռք Գործակցութեան Ռահվիրան» յոյժ կարեւոր բաժնին ներքեւ, Շահան Գանտախարեանի ստորագրած եւ «Անախընթաց Նախաձեռնութիւններ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կողմէ» խորագրեալ յօդուածին մէջ կը կարդանք.


«Արցախեան 44-օրեայ պատերազմի ամենէն թէժ օրերուն, Վեհափառ Յայրապետին նախաձեռնութեամբ եւ հրաւերով Անթիլիասի վեհարանի դահլիճին մէջ կայացած հոգեւոր, կուսակցական եւ միութենական առումներով համասփիւռքեան կառոյցներու ներկայացուցիչներու հանդիպումը խիստ յատկանշական իրադարձութիւն է բազմաթիւ ուղղութիւններով: Օրակարգը՝ պատերազմական ճգնաժամի համախումբ աշխատանքներ ծաւալելու հրամայականի ընկալումով պարտաւորեցնողն էր: Եւ ճիշդ ժամանակին, տեղին առնուած այս քայլը փաստօրէն կը համախմբէր համասփիւռքեան գործունեութիւն եւ կառոյց ունեցող մեր իրականութեան մէջ գործող ամենէն հիմնական կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Հանդիպումը փաստօրէն ոչ միայն լսեց Վեհափառ Յայրապետին պատերազմական օրերուն տարած աշխատանքներուն մասին զեկոյցը, այլ Նաեւ առիթ ունեցաւ անոր յոյսին տակ քննարկում կատարելու եւ առաջարկներ յղելու: Հանդիպումը փաստօրէն վերահասու դարձաւ Արցախի



## ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆԿԻՆ

### ՆՈՐ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ



Վան Խոյեան

Այս օրերուն զբաղումի միջոցները շատ են, յատկապես խաղերը, ըլլան անոնք համակարգիչի, թէ ձեռնահեռաձայնի վրայ:

Խաղերու հիման վրայ մարդիկ բաժնած են երեք խումբի. առաջին խումբին կը պատկանին անոնք, որոնք խաղեր կը պատրաստեն, երկրորդ խումբին մաս կը կազմեն անոնք, որոնք միայն կը խաղան (այսինքն՝ խաղացողները), իսկ երրորդ խումբին՝ անոնք, որոնք երբեք այսպիսի խաղեր չեն խաղար:



Ես երկրորդ խումբին կը պատկանիմ, բայց խաղերու հետաքրքրութիւնն ու սերս օգտագործեցի, որպէսզի առաջին խումբին միանամ: Սկսայ փոքր խաղ մը պատրաստել, բայց կիսատ ձգեցի զայն, որովհետեւ ուզեցի, որ այս խաղը փորձ մը ըլլայ՝ հասկնալու համար խաղ մը պատրաստելու դժուարութիւնը:

Ուրախ եմ, որ կրցայ այս ոլորտին մէջ փորձառութիւն շահիլ եւ կը քաջալերեմ բոլոր ընկերներս, որ նման քայլ ամեն, որովհետեւ ապագան համակարգիչ վերաբերող մասնագիտութիւններու տիրացողին է:

### «ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ...»

Սկիզբ՝ էջ 8

Թէ Հայաստանի Հանրապետութեան առաջին դէմքերու հետ կայացած հարցազրուակներուն, հրադարձի հաստատման աշխատանքներուն, Արցախի մէջ տիրող իրավիճակին եւ այդ բոլորէն մեկնելով ձեռնարկուող աշխատանքներուն» (էջ 287-288):

Կ'արժէ անդրադառնալ նաեւ, թէ «Մտաւորական Վեհափառը» խորագրեալ յօդուածին մէջ, Նորվան Արք. Չաքարեան յատուկ կերպով կը շեշտէ:

«Արամ Ա. Կաթողիկոսի մշակած գրականութեան մէջ առանձնայատուկ տեղ կը գրաւէ յորդորական գրականութիւնը, ճառի, քարոզի տեսակը կ'օգտագործէ, որովհետեւ իր գրականութիւնը կողմնորոշուած է դէպի դաստիարակութիւն ընդդէմ հայաթափութեան: Ներքողի, ճառի, քարոզի տեսակը, հին հայրերը՝ ինչպէս Յովհաննէս Ռսկէբեթրան, Բարսեղ Կեսարացի եւ դեռ շատ ուրիշներ, կ'օգտագործէին այս եզրը, դաստիարակչական նպատակներով: Նոյնը կը կիրարկէ Արամ Ա. Կաթողիկոս իր բացառիկ տաղանդով եւ լեզուաճանաչական կրօնյօրինումաճծով: Հայակերտումը, ազգակերտումը, ինքնակերտումը, հովուապետի իր դաստիարակչական մտահոգութեանց առանցքը կը կազմեն: Անոր յորդորական գրականութիւնը կը կրէ բնաւի գաղափարներ, ինչպէս. ծառայութիւն, առաքելութիւն, յանձնառութիւն... Արամ Ա. Կաթողիկոս կը ստեղծագործէ առհասարակ ըստ սփիւռքեան պայ-

մաններուն: Իր բոլոր ճառերն ու քարոզները գրուած են հարուստ բառամբերով՝ եկեղեցական, հասարակական, գրական, մշակութային ու քաղաքական, եւ հետեւաբար՝ մեծ դեր կը կատարեն հայ ժողովուրդի պատմութեան ինքնագիտակցութեան զարգացման, ազգային-հայրենասիրական տրամադրութիւններու ձեւաւորման ու աշխուժացման մէջ»: (էջ 493)

Աւելի վերջ կը տեսնենք Վեհափառ Հայրապետին մասին հայ թէ օտար տասնմէկ անձնաւորութիւններու կողմէ տրուած բազմիմաստ վկայութիւնները: Այս գծով նախաճաշակ մը տալու համար կը մշտեցնենք:

«Իր վեհանիստ Սուրբ Աթոռէն, Վեհափառը կը ջատագովէ ազգի ու հայրենիքի ազատութիւնը եւ աշխարհատարած հայ մարդու ինքնութեան ու պատկանելիութեան առողջ պահպանումը կը դարձնէ իր մտասերեռումներուն կիզակետը: Հայկականութիւնը կը դառնայ ազգի սիրտը, հայոց պետականութեան էատարր կեցուցիչը: Սկզբունքայնութեան մարտիկն է Վեհափառը, որ իր խօսքին կու տայ բարոյական վեհագոյն կշիռ եւ ատո՛վ իսկ կը դառնայ ազգի՝ կրթարան՝ յանուն վարդաւան սերմին հոգեմտաւոր կեանքի առողջ գոյառման՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս աշխարհին...» («Ռուսուցապետ Վեհափառը», Թորգոմ Եպս. Տօնոյեան, էջ 531):

Միհրան Քիւրտոյլեան իր հերթին «Պատգամախօս Հայրապետը» վերնագրեալ վկայութեան մէջ արձանագրած է.

«...Իրաւատրի Հայրապետական պատգամը հասաւ մինչեւ իսկ թրքական իշխանութիւններուն, երբ պաշտօնապէս Սիսի արեւակեայ Կաթողիկոսարանէն ինչեք պահանջատիրական ծայրը Վեհափառին եւ ապա Սիսի պատմական Կաթողիկոսարանի վերադարձը պահանջող դատական հայցը Կիլիկիոյ Հայոց Հայրապետին:

Դիպուկ էր ընտրուումը բարեկամի մը, որ քանի մը տարի առաջ Նոր քառ մը կազմելով կը պնդէր, թէ Արամ Ա. «հայրենամարտիկ» Կաթողիկոս է, այլ խօսքով՝ հայրենիքի ու հայութեան համար մարտնչողը»: (էջ 536)

Յատկապէս նշանակից է Fr. Dr. K.M. George-ի ստորագրած եւ «**A Visionary Ecumenical Leader**» յօդուածը, կը մշտեցնենք (թարգմանաբար):

«Որպէս ատենապետ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական եւ Գործադիր Վարչութիւններուն, ան միշտ զգայուն էր տեղական եկեղեցիներուն նուրբ տրոփին հանդէպ, որոնք լայնօրէն տարածուած էին աշխարհի վրայ, բայց ան զանոնք Ե-Հ-ի մէջ համախմբեց իրենց ներկայացուցիչներուն միջոցաւ՝ ընկերակցութեան եւ ապագայի յոյսի ոգիով: Արամ Ա. կըրնար նաեւ զգալ այն անապահովութիւնը, որ կը շրջապատէր հին աստուածութիւններով եւ ինքնութեամբ ընտրուած եկեղեցիները այսպիսի համախմբումներու պարագային:

Արամ Ա. Կաթողիկոս կը կարողար յարաւորութիւն ժամանակներու նուրբ տառերը...»: (էջ 542)

Շարքը կարելի է երկարել: Հատորին վերջաւորութեան տեղադրուած են շնորհաբաշխ Վեհին կատարած լայնածիր այցելութիւնները, հանդիպումները եւ տուած դասախօսութիւնները:

Անտարակոյս, որ բացառիկ բծախնդրութեամբ եւ լրջագոյն յանձնառութեամբ խմբագրուած ու հրատարակութեան պատրաստուած այս հատորը ունի իր խմբագրական կազմը, որուն մաս կը կազմեն՝ Գերշ. Տ. Վարդապետ Արք. Յերկէլեան, Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան, Օրդ. Արտեմիս Հացագործեան, Տիար Վիգէն Աւագեան, Տիար Շահան Գանտահարեան:

Այսքանը բովանդակութեան մասին:

Ամփոփելով. առանց աւանդական խորագրի, սակայն շուտով խորագոյն նշանակութիւն ու պատգամ դրսեւորող եւ պատկանելի հատորի մը ենթադրած չափորոշիչները ամբողջացուցած, ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի բազմակողմանի հարուստ կենսափորձին, ապագայատեսիլ աշխարհայեացք-մտածողութեան, կենդանի խօսքին առիթնը անհատականութեան հիմնաւի շիթերով յագեցած, Սփիւռքի, Հայաստանի թէ Արցախի երբեմն անհակակշռելի, յաճախ ցաւոտ, անորոշութեամբ թաթաւուն, նոյնիսկ անըմբռնելի դէպքերուն եւ յարակից դժուարութիւններուն ամենէն տագնապալի ծալքերուն մէջ անգամ յոյսի նշոյլ-

ներ ցայտող եւ մեծ թիւով վաստակաշատ գրողներ համախմբող այս ծանրակշիռ երկը, իր տեսակին մէջ եւ տուեալ ժամանակահատուածին համար՝ բառին ամբողջական իմաստով խիստ կարեւոր փաստաթուղթ մը կը ներկայացնէ, եւ մեր կարծիքով միանշանակ կրնայ իբրեւ վաւերական մատեան ծառայել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կշուած 25 տարիներու անխախտ ու անխոցելի հեղինակութեան, յաղթապանծ նուաճումներուն մասին, եւ տակաւին յորելեակական այս հատորին բաղկացուցիչ հմայքը կը հանդիսանայ որակական լուրջ ուսումնական համայնականը, նոյնիսկ դէպի համամարդկային, ուր իւրաքանչիւր ընթերցող ուր որ ալ ըլլայ, ժամանակի եւ միջոցի որ ոլորտին մէջ ալ գտնուի, այստեղ անպայման պիտի տեսնէ ի՞ր ինքնութիւնն ու դիմագիծը, պիտի գտնէ գիտակցական յղացքով կենսաւորուած ի՞ր ապրումները, ի՞ր երազանքները՝ յարանուած յաղթանակներու տեսիլքով գօտեպնդուած...:

### ԿԵԱՆՔԻՍ...

Սկիզբ՝ էջ 6

րութեան, որ կարծեք տեղեակ էր, որ իր հարազատ գաւազները կու գային իրենց անցեալի աստուածները փառաբանելու անգամ մը եւս, անոնց կայունութեան եւ բարձրութեան հպարտութիւնը ապրելու:

Բարձր էր Նեմրութ լեռը, այնպէս ինչպէս բարձր էր իր խորհուրդը, իսկ ուխտագնացութիւնը բարձր ոգի եւ կամք կը թելադրէր... հեւալով եւ երբեմն կանգ առնելով, մերթընդ մերթ ետին նայելով, առաւել ոգեշնչուած կը շարունակէինք բարձրանալ եւ վերջապէս հասանք 3050մ. բարձրութեամբ Նեմրութ սարին գագաթը, ուր զբօսաշրջիկներու հոծ բազմութիւն մը նաեւ ապշած եւ գրաւուած կը զննէր հայ հեթանոսական աստուածներու կանգուն եւ հսկայաբարձ յուշարձաններն ու կիսաւորները: Այնտեղ նըշմարելի գրութիւններով կը բացակայէր անշո՛ւշտ՝ «հայ» անուընդ եւ շեշտը դրուած էր միայն յունական աստուածներու վրայ:

Սակայն Անահիտի, Միհրի, Տիրի եւ Վահագնի արձանաշարերը մեզ կը վստահեցնէին, որ «իրականութիւնը արեւու լոյսին տակ կարելի չէր շրջել կամ պահել»: Է՛հ, հայրս բախտ եւ ճակատագիր:

Վերջապէս բարձունքէն վար հորիզոնէն երեցող արեւամուտը հաստատեց Նոր արեւածագի մօտալուտ ժամանումը. «Մօտալուտ արշալոյսի մը ոտնաձայնները կը լսեն»... տարաբախտ բանաստեղծ Դ. Վարդապետի միտքերով:

Մայրամուտի խոնարհ, բայց եւ խոստմալից հրապոյրով, ծանր քայլերով հասանք լեռան լանջին...

Անհամբեր առաւօտեան արեւածագին սպասելով. չէմ յիշեր, թէ քնացած էի այդ գիշեր:

Եւ արդէն դէպի Բաղէշ եւ Տիգրանակերտ ու Մուշ...

Կը շարունակեմ գրել մեծ կարոտով ու... յաջորդ թիւերով:

(Շար. 2)

## ԻՆՉ ԿՐՄԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

**Խոյ**  
Ձեր անձնական հարցերը գաղտնապահութեամբ լուծեցէ՛ք: Ձեր ուժերը մարդոց մի՛ ցուցադրեք, որպեսզի յաջողիք:
- 

**Ցուլ**  
Մի՛ տատամսիք Նոր գործեր եւ ծրագիրներ մշակելէ: Անոնք հոգեկան գոհունակութիւն պիտի պարգեւեն ձեզի:
- 

**Երկուորեակ**  
Այս շաբաթ երկար սպասումէ ետք յոյսի Նշոյլ մը պիտի երեւի ձեզի: Հաճելի հանդիպում մըն ալ պիտի ունենաք հին բարեկամի մը հետ:
- 

**Խեցգետին**  
Բնութեան գիրկին մէջ հանգըստանալու կարիքը ունիք: Ճամբորդութիւն մը կրնայ Նոր հորիզոններ բանալ ձեր առջեւ:
- 

**Առիւծ**  
Ձեր բարկացկոտ Նկարագիրը վատ ազդեցութիւն կրնայ ունենալ ձեր վրայ: Բարի լուր մը պիտի ստանաք եւ հանգստութիւն վայելեք:
- 

**Կոյս**  
Դժուար հարցեր լուծելու մեծ կարողութիւն ունիք: Լաւատես էք: Ձեր շուրջիները արժեւորելով ձեր կարողութիւնները պիտի գնահատեն ձեզ:
- 

**Կշիռք**  
Իմաստութեամբ շարժեցէ՛ք այս շաբաթ: Ժամանակ տրամադրեցէ՛ք ձեր գործերը դասաւորելու: Մօտիկ ազգական մը պիտի օգնէ ձեզի:
- 

**Կարիճ**  
Յոգնած էք եւ կարճ հանգիստի մը պէտք ունիք: Մի՛ ազդուիք ձեր շուրջիներուն խօսքերէն, որոնք անորոշութեան կրնան մատնել ձեզ:
- 

**Աղեղնաւոր**  
Միրային արկածախնդրութիւն մը պիտի ապրիք այս շաբաթ: Նիւթական վարձատրութիւն մըն ալ պիտի ստանաք:
- 

**Այծեղջիւր**  
Ձեր երկար ծառայութիւնները յաջողութեամբ պիտի պսակուին եւ դուք հոգեկան խաղաղութիւն պիտի ստանաք:
- 

**Ջրհոս**  
Ուրախ տրամադրութիւնը պիտի պատէ ձեզ այս շաբաթ: Փոքր ճիգով պիտի իրականացնէք ձեր երազները:
- 

**Ձուկ**  
Ձեր շրջապատին հետ հասկցուելու դժուարութիւն ունիք: Լաւապէս մտածեցէ՛ք, որպէսզի դիրութեամբ դուրս գաք այս իրավիճակէն:



## ՀՈԳԵԲԱՆԻՆ ԹԵԼԱԴՐԱՆՔԸ ՎԵՐԱՍՈՒՄԻՆ ԱՌԻԹՈՎ ՄԻ՛ ՆՈՒԱՏԱՑՆԷՔ ՁԵՐ ԵՐԵՒԱՆ ՑԱԾ ԳՆԱՀԱՏԱՆԻՇԵՐ ՍՏԱՆԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ

Հոգեբաններ յաճախ կը կրկնեն, որ ծնողքը երեխային հետ դաս սորվելու չէ: Անոր հետ գիրքերը պայուսակին մէջ դասաւորելու չէ: Պետք չէ հարցնել՝ «դպրոցը ինչպէ՛ս է»: Ընդհանրապէս. թոյլ պէտք է տալ, որ երեխան իւրովի ընէ այդ բոլորը: Հետեւաբար մի՛ խճողէք իր առօրեան յաճախակի հարցումներով:

Այլ նիւթերով գրուցեցէ՛ք ձեր երեխաներուն հետ, մինչեւ որ ան դպրոցի ճնշիչ առօրեային աստիճանաբար վարժուի եւ ինք սկսի պատմել կամ հարցումներ ուղղել ձեզի:

Երեխան պէտք է անպայման ունենայ իր ազատ ժամը եւ օրուան ընթացքին գէթ 2-4 ժամ ոչինչ ընէ: Յաւակնոտ ծնողները, սակայն, օրուան մէջ ազատ ժամ չեն ձգեր՝ յաւելեալ դասերով, լեզուներ սորվելու դասընթացներով կը խճողեն իրենց գաւակներուն առօրեան:



Դպրոցին եւ ուսուցիչներուն հետ յարաբերութիւններուն կարեւորութիւն տուէ՛ք: Հետեւեցէ՛ք ձեր երեխային անսկատ կերպով: Մի՛ վախցնէք զինք ցած գնահատանիչներէ, որպէսզի ան չհիասթափուի դպրոցէն կամ դասերէն:

Ընդհանրապէս գերազանց աշակերտները, որոնք ջանասիրաբար կ'ապահովեն իրենց բարձր գնահատանիչները, անհանգիստ անձնաւորութիւններ են, անոնք երբեմն կը թերագնահատեն իրենց կարողութիւններն անգամ: Այնպէս որ մի՛ պարտադրեք ձեր երեխային առաջնակարգ ըլլալ ամէն գնով:

Եթէ նկատեք, որ ձեր գաւակը ի վիճակի չէ առանձին կատարել տնային պարտականութիւնները, հարկ է որոնել այս ընթացքին տուն տուող պատճառները: Այստեղ ծուլութիւնը չէ հարցը: «Ծուլութիւն» հասկացութիւնը ընդհանրապէս գոյութիւն չունի հոգեբանութեան մէջ: Ծուլութիւնը կը յառաջանայ կամքի բացակայութենէ: Իսկ եթէ երեխան չի կրնար ինքնուրոյն սորվիլ դասերը, այս մէկը կրնայ, գործրինակ, հոգեբանական հարցերու հետեւանք ըլլալ: Հարցեր, որոնք յառաջացած կ'ըլլան ուշադրութեան բացակայութեան, գերաշխուժութեան, ծնողական հարցերու եւ այլ պատճառներով:

Ուստի, երեկոյեան, անոր հետ դաս սորվելու փոխարէն, փորձեցէ՛ք հասկնալ, թէ ձեր երեխան ինչո՞ւ չի կրնար առանձին դաս սորվիլ, այնուհետեւ ջանացէ՛ք սրբագրել ընթացքը:

Կան ծնողներ, որոնք անպայման կ'ուզեն կերտել պատասխանատու, ինքնուրոյն աշխատող եւ յաջող գաւակներ: Կան այլ ծնողներ, որոնք նպատակը երեխային հսկելն է միշտ, կարեւոր ալ չէ, թէ ան ինչպիսի՛ անձ կը դառնայ հետագային, կարեւորը՝ չսխալիլն է, բարձր նիշեր ապահովելը եւ վերջ:

Յաճախ գնահատանիչներու պատճառով, բառացիօրէն, կը քանդուին ընտանիքներ, ընկերային յարաբերութիւններ եւ այլն: Դեռահասներուն ներաշխարհը արդէն իսկ հակասական վիճակներու կ'ենթարկուի, իսկ անարտական քննութիւններու համար ամիսներով դաս սորվիլը դժուար կացութիւններ կը ստեղծէ թէ՛ դեռահասին, եւ թէ ընտանիքին համար. բոլորը ջղային կը դառնան, որուն հետեւանքով ալ դեռահասը կրնայ խոչնդել ընկճախտի ենթակայ դառնալ:

## ԻՆՉՊԷՍ ԽՈՒՍԱՓԻԼ ԱՅՍ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԷՆ

Անհրաժեշտ է կեդրոնական սիրոյ եւ մնայուն արժեքներու վրայ:

Պահ մը մտածեցէ՛ք, որ շատ շուտով, երբ բոլոր քննութիւններն ու գնահատանիչները կը մոռցուին, պարզապէս ձեր գաւակին հետ մտերմութիւնը, վստահութիւնը, փոխըմբռնումը եւ ընկերութիւնը կը մնան:

Այո՛, հաւանաբար դուք կը յաջողիք ձեր գաւակը արժանի դարձնել լման գնահատանիչի, սակայն մի՛ մոռնաք, որ ատիկա կրնայ իրականանալ ի գին ձեր յարաբերութիւններուն: Ան կ'ընդունուի բարձրագոյն համալսարան, բայց դուք արդէն ի վիճակի չէք ըլլար վերականգնելու ձեր գաւակին հետ յարաբերութիւնները:



Ուստի, ուշադիր եղէ՛ք եւ մի՛ պարտադրեք ձեր կամքը անոր: Թոյլ տուէ՛ք, որ ձեր գաւակը իր նախասիրութիւնները, իր ուզած եղանակով կիրարկէ: Այս պարագային ան պիտի յաջողի ու երջանիկ անձ դառնայ, իսկ ձեր յարաբերութիւնները շատ անելի լաւ ու առողջ պիտի ըլլան:



Ռաֆֆի Սիլահեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

- Սուրիոյ ֆուտբոլի տղոց Ա հաւաքականը Յորդանանի մէջ տեղի ունեցած բարեկամական մրցաշարքին 2 - 0 արդիւնքով պարտութեան մատուցեցաւ հիւրընկալ Յորդանանէն:



- Սուրիոյ պասքեթի դաշնութեան նախագահ Թարիֆ Զոթրաշ Եւ ընդհանուր քարտուղար Շիատ Էլ-Ռաշիկ իրենց հրաժարականները ներկայացուցին Մարզական Գերագոյն Մարմինին: Անոնք իրենց վերջնական որոշումը պիտի փոխանցեն Ֆիրաս Մուաայի ճամբորդութենէ վերադառնալէն ետք:

- Հալէպի Ալի Իթիհատ ակումբի պասքեթի տղոց խումբի խաղացողներ Անթոնի Պաքըր Եւ Ապտուլ Ռահապ Համուի յառաջիկայ օրերուն տեղի ունենալիք արաբ ակումբներու մրցաշարքին պիտի բացակային խումբէն՝ վիրաւոր ըլլալուն բերումով:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՊԱՐՍԵԼՈՆԱՆ ՄԵՍՍԻՆ ԽՈՒՄԲ ՎԵՐԱԳՂԱՐՁՆԵԼ Կ'ՈՒՅԷ

Ըստ Mundo Deportivo-ի, Պարսելոնան մտադիր է յաջորդ ամրան վերադարձնել արժանիքից յարձակողական խաղացող Լիոնել Մեսսին:

35-ամեայ ֆուտբոլիստի պայմանագրութիւնը Փարիզ Սան ժերմանին հետ վերջ կը գտնէ այս մրցաշրջանի ավարտին: Յունուարին քաթալոնեական ակումբի ղեկավարութիւնը պաշտօնապէս բանակցութիւններ պիտի վարէ Մեսսիի հետ: Պարսելոնայի սպանացի գլխաւոր մարզիչ Չապի փափաք ունի աշխատիլ Մեսսիի հետ, մասնաւոր որ անոնք վստահ են որ արժանիքից մարզիկը կը համաձայնի աշխատավարձի նուազեցման:

Յիշենք, որ ընթացիկ մրցաշրջանին Մեսսին Ֆրանսական ակումբին հետ մաս կազմեց 11 հանդիպումի եւ կրցաւ նշանակել 6 կոլ, ինչպէս նաեւ կատարեց 8 կոլի փոխանցում:



### ՈՒՅՖԱ-Ն ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱԵՎԱԿԱՆ ԶԵՆՈՒՄՆԵՐԻ ԵՐՈ 2024-ԷՆ

Խրուաթիոյ Հուար քաղաքին մէջ տեղի ունեցաւ ՈՒՅՖԱ-ի Գործադիր Կոմիտէին նիստը: Նիստին տեղի ունեցաւ Երո-2024-ի ընտրական փուլի յառաջիկայ վիճակահանութեան կարգը, որ տեղի պիտի ունենայ 9 Յոկտեմբերին, Ֆրանքֆուրթի մէջ:

Ըստ Գործադիր Մարմինի որոշումին, Ռուսիա մաս պիտի չկազմէ վիճակահանութեան, որովհետեւ 28 Փետրուարի որոշմամբ Ռուսիոյ բոլոր հաւաքականներն ու ակումբները գրկուած են ՖԻՖԱ-ի եւ ՈՒՅՖԱ-ի հովանիին ներքեւ տեղի ունենալիք բոլոր մրցումներէն: Գերմանիոյ ֆուտբոլի Դաշնութիւնը, որ կը հիւրընկալէ Երոպայի առաջնութիւնը, ՈՒՅՖԱ-էն պահանջած է հեռացնել նաեւ Պելառուսի հաւաքականը: ՈՒՅՖԱ-ի Գործադիր Կոմիտէն առայժմ մերժած է այդ առաջարկը:

Յիշենք, որ Երոպայի 2024-ի առաջնութեան մրցումները տեղի պիտի ունենան 14 Յունիսէն 14 Յուլիս 2024-ին:



### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 409)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

### Հորիզոնական

1. Ռուբէն Զարդարեանի հեքիաթներէն՝ «..... Արցունքը»: Յալի ճիշդ:
2. Բլուրի անարեւ կողմը: Շաղկապ: Առարկայ:
3. 5002: Ամուրի: Ժխտական նախածանց:
4. Հակառակ՝ արական կոչական բառ: Ռամկօրէն՝ այո:
5. Հակառակ՝ երկվար: Սարսափ: Առածը կ'ըսէ. «..... հասկին գլուխը միշտ բարձր կ'ըլլայ»:
6. Ջորի: Սուրիական լրատու գործակալութիւն:
7. Փայփայանք:
8. Լայնք (կերպասի): Լեւոն Շանթի թատերախաղերէն՝ «..... Մարդը»: 680:
9. Դատարկ: Որեւէ դէպքի կամ իրադրութեան հետ կապուած մէկ կամ անէի տարիներ լրանալու օրացուցային թուական կամ հանգրուան:
10. Հայրապետական պաշտօնական գիր: Ուրիշ:
11. Անձնական դերանուն: Ձայնաւոր տառեր:
12. Հետեւեալ խօսքին հեղինակը. «Հի կարելի օգնել այն ընկածին, եթէ նրան պակասում է ինքնօգնութեամբ ոտքի կանգնելու կամքը»:


### Ուղղահայեաց

1. Բարեբեր: Կոնաբեր ծառի տեսակ՝ կարմիր հատիկներով: Կռիւ:
2. Ռուբեր նետող զինուոր: Մանկական երգերու մեկնաբան:
3. Հակառակ՝ անձնական դերանուն: Սպանախ:
4. Մակոյկ, նաւակ: Մէկուն մօտ պահ դրուած դրամ՝ ինչք, ետ առնելու պայմանով:
5. Հինգած պանիրի մանր որդ: Արեւագալ:
6. Ծովի աւազակ: Աչք:
7. Վայրկեան: Կրօնաւորի զգեստ: Էական բայ:
8. Երկբարբառ: Սեւանայ լիճի հիւսիս-արեւմտեան ափին գտնուող քաղաք:
9. Խակ, անփորձ: Երկբարբառ:
10. Հայ նահապետ: Հակառակ՝ դի:
11. Արական անուն: Անձնական դերանուն:
12. Լեզուն կապուիլ:

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 408)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	վ	ե	ր	մ	ա	կ	ի	դ	գ	ն	ա	
2	ի	լ		ա	ւ	ե	տ	ի	ս	ե	ա	ն
3	ք	ք		ն	ա	ր	է		դ	կ		
4	թ		ա	ն	կ	ա	ն		ա	ր	ա	
5	ո	գ	ն	ի		ե	լ		ա	ր	ա	ր
6	ր	ա	մ		ա	ր	ծ	դ		դ		
7	հ	ր	շ	է	ջ		տ	ի	պ		ձ	ա
8	ի	մ	ա	ն	ա	լ		ա		ե	ր	կ
9	ւ		կ		կ	ե	դ	ծ	ա	ւ	ո	ր
10	կ	ծ		ի	ց	ա	հ	ա	ն			ա
11	օ	ր	ա	գ	ի	ր		ն	ա	ր	օ	տ
12	ի	կ		լ	դ			գ	է	թ		

ԼՈՒՐԵՐ



## ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԲՈՒՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԷՆ ՆԵՐՍ ԶԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՒ ԵՌԱԳՈՅՆ ԴՐՈՇԻ ՕՐԶՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐՈՒԵՅԱՒ

Հայաստանի Հանրապետության վերականգնողական 31-րդ ամսական ամիսը, Կիրակի, 25 Սեպտեմբեր 2022-ին, Բերիոյ Հայոց Թեմի բոլոր շրջաններու եկեղեցիներէն Ներս հանդիսաւորապէս կատարուե-

ազգային-միութենական մարմիններու ներկայացուցիչներ:

- Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, Ճեգիրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Ս. Լեւոն Վրդ. Եղիայեան յընթացք Սուրբ Ե. Անմահ



ցաւ Հանրապետական Մաղթանք եւ Եռագոյն Դրօշի օրհնութիւն:

- Հայլէպի Սրբ. Բառասկից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդի Տեղապահ Հոգ. Ս. Մանուկ Աբղ. Պարիխանեան հանդիսապետեց Սուրբ Ե. Անմահ Պատարագին, որուն ընթացքին Հանրապետական Մաղթանք եւ Եռագոյն Դրօշի օրհնութիւն կատարեց, Հայաստանի Հանրապետության Հայլէպի Գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդակալ, Հիւպատոս Մեծարդոյ Տիար Բարգէն Պատալեանի, Ազգային Վարչութեան անդամներու, ազգայիններու, եկեղեցիներու թաղականներու եւ հաւա-

Պատարագին հանդիսաւորապէս կատարեց Հանրապետական Մաղթանք եւ Եռագոյն Դրօշի օրհնութիւն, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամներուն, ազգայիններու, թաղականներու եւ ժողովուրդին ներկայութեամբ: Օրուան պատարագին էր՝ Արժ. Ս. Պսակ Զինյ. Պերպերեան:

- Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ յընթացք Սուրբ Ե. Անմահ Պատարագին Լաթաքիոյ եւ Շովեգրեայ շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Ս. Վազգէն Զինյ. Զեռնեան Հանրապետական Մաղթանք եւ Եռագոյն Դրօշի օրհնութիւն կատարեց, ազգային-միութենական մարմին-



նացեալներու ներկայութեամբ:

- Հայլէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Արժ. Ս. Չարեհ Զինյ. Շաքարեան Սուրբ Ե. Անմահ Պատարագ մատուցեց: Յաւուր պատշաճի քարոզեց Արժ. Ս. Յուսիկ Ա. Զինյ. Սեղրակեան: Պատարագի ընթացքին Հանրապետական Մաղթանքի եւ Եռագոյն Դրօշի օրհնութեան արարողակարգ կատարուեցաւ:

- Հայլէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ Սուրբ Ե. Անմահ Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Արժ. Ս. Մաշտոց Ա. Զինյ. Արապաթեան: Յընթացք Սուրբ Ե. Անմահ Պատարագին, Բահանայ Հայրը Հանրապետական Մաղթանքը ընթերցեց եւ Եռագոյն Դրօշի օրհնութիւն կատարեց, մասնակցութեամբ՝ Արժ. Ս. Արշակ Ա. Զինյ. Ալաճաճեանի: Ներկայ էին

ներու ներկայացուցիչներու եւ բարեպաշտ ժողովուրդին ներկայութեամբ:

- Զեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Հորեքաբթի, 21 Սեպտեմբեր 2022-ին, Զեսապի Հոգեւոր Տեսուչ Հոգ. Ս. Անդրանիկ Աբղ. Զիրիւմեանի նախագահութեամբ, յընթացք Սուրբ Ե. Անմահ Պատարագին կատարուեցաւ Հանրապետական Մաղթանք եւ Եռագոյն Դրօշի օրհնութիւն: Արարողութեան ներկայ էին Զեսապի Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական համայնքներու հոգեւոր հայրերը, միութիւններու ներկայացուցիչներ եւ հայրենասէր ժողովուրդը:

Թող Ամենակալը պահէ ու պահպանէ մեր հայրենիքը՝ Հայաստանը եւ ծաղկուն կեանք պարգեւէ հայ ժողովուրդին:

Թողակից

## «ՎԱՃԵՄԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ «ՇՈՂՈՔՈՐԹ»-Ը ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՈՎ ՀՄԱՅԵՑ ՀԱՆԴԻՍՄԵՏՆԸ

Կրթասիրաց Մշակութային Միութեան «Վ. Աճեմեան» թատերախումբը տարիներու պատմութիւն ունի: Այդ ընթացքին յաջողած է արժանանալ հանդիսատեսի համակրանքին:

Թատերախումբը այս տարի ներկայացուց Յակոբ Պարոնեանի «Շողոքորթը», Լուսինա՝ թատերախումբի վերականգնումի 5-ամեակին:

Երկու արարներ ունեցող թատերախաղը ներկայացուցաւ տողք. Սմբատ Երեցեանի բեմադրութեամբ: Ներկայացումները տեղի ունեցան

Շաբաթ 17 եւ Կիրակի 18 Սեպտեմբեր 2022-ին, երեկոյան ժամը 7:30-ին, «2. Գաբրիէլեան» սրահէն Ներս, հովանաւորութեամբ ԿՄՄ-ի Խնամակալութեան, կազմակերպութեամբ Գործադիր Մարմին:

Հանդիսավար Անի Աթաշեան ողջունելով ներկաները անդրադարձաւ «Վ. Աճեմեան» թատերախումբի պատմութեան եւ կարելի դերին՝ մշակոյթի պահպանման եւ զարգացման առաքելութեան մէջ, ապա ներկայացուց խումբին ցարդ ներկայացուցած թատերգութիւնները:

Թերեւս շատեր հարց տան, թէ ինչո՞ւ դարձեալ Պարոնեան. պատասխանը շատ պարզ եւ յստակ է,



որովհետեւ Պարոնեան եղած է մեր ազգային բոլոր ժամանակներու երգիծանքին իշխանապետը, որ աշխարհ եկած է անուղղելի սխալներ սրբագրելու: Ան մեր դէմ բռնած է մեր կեանքի հայելին, որպէսզի մենք ալ մեր կարգին միշտ գմեզ տեսնենք, մենք գմեզ դիտենք եւ դատենք անշուշտ, եթէ դատելու փափաքը, կարողութիւնն ու քաջութիւնը ունինք:

Իսկ հիմա «Շողոքորթը» միջնորդ մըն է, որ ամէն կողմէ նիւթական շահ ապահովելու համար կը դիմէ կեղծաւորութեան, իսկ վերջաւորութեան, երբ իր իսկութիւնը կը բացայայտուի, ծածկելու համար իր յանցանքը «Թիրիմացութիւնը» իբրեւ գեղեցիկ բռնած ինքզինքը կ'արդարացնէ:

Շուրջ մէկ ու կէս ժամ տեւող այս ներկայացումը առիթ տուաւ հանդիսատեսին անգամ մը եւս հաստատելու, որ թատրոնը ոչ թէ միայն դպրոց է, այլ նաեւ՝ մեր կեանքի հայելին:

Թատերական խաղին մէջ ակընյայտ էին նաեւ բեմադրիչ տողք. Սմբատ Երեցեանի տարիներու փորձառութենէն ձեռք ձգուած ցուցմունքները, արուեստավարժ մակարդակով դերակատարներ պատրաստելու աշխատանքը, որուն արգասիքն էր ներկայացումը:

Իսկապէս շնորհաւորելի եւ ծափահարելի էին թատերախումբի երիտասարդները, որոնցմէ իւրաքանչիւրը բեմին վրայ, ամբողջ թատերախաղի տեւողութեան, կրցաւ արտայայտել իր ներկայացուցած

դերը՝ համարձակ եւ ներդաշնակ խաղարկութեամբ, գեղեցիկ փայլք մը տալով անոր:

Յիշենք նաեւ, որ «Վ. Աճեմեան» Թատերական Յնձնիս. -ի ընդհանուր պատասխանատու՝ Յակոբ Աթաշեան, հայկական արուեստին եւ մշակոյթին Լուսինա՝ թատերական մըն է, որ միշտ իր կարելի ներդրումը բերած է միութեան՝ շարունակելով իր անջնջելի դրոշմը՝ ղնել թատերական կեանքին վրայ:

Աւարտին բեմ բարձրացաւ Գործադիր Մարմնի ատենադպրուհի Լուսին Տիշոյեան: Ան շնորհակալական խօսք ուղղեց խնամակալութեան եւ գործադիր մարմնին, որոնք թեւ թիկունք կանգնեցան այս աշխատանքին: Ապա գնահատեց Թատերական Յնձնիս. -ի անդամները եւ քուլիսներու մէջ գործող կամաւորները:

Գործադիր Մարմնի ատենապետ Գեղամ Աթաշեանը այնուհետեւ պարգեւատրուեցաւ գնահատագիրով, առ ի յարգանք իր հինգ տարիներու աշխատանքին:

Արդ, պարգեւատրուեցան բեմադրիչ Սմբատ Երեցեան, «Վ. Աճեմեան» թատերախումբի ընդհանուր պատասխանատու Յակոբ Աթաշեան, դերակատարներ Գրիգոր Հայլաճեան, Արիկ Նարկիզեան, Լուսին Մովսէսեան եւ Մարիա Մովսէսեան, ներկաներուն բուն ծափահարութեան արժանանալով:

Բարի երթ «Վ. Աճեմեան» թատերախումբի գործունեութեան՝ դէպի լուսաւոր ամեակներ:

Վարձքը կատարի հայ դերասանին, քանզի մշակը արժանի է իր վարձքին:

Լուսին Տիշոյեան